ՇԱՐՔ ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ՎԻԼՀԷՄ

ԿԱՄ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ

ՇԱՐՔ ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ՎԻԼՀԷՄ

ԿԱՄ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ՓԻԼԻՊՊՈՍ ԵՐԿԲՈՐԴԻ ԿԱՅՍԵՐ ՍՊԱՆԻՈՅ

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԷՎԷՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՍ

1894

135
8

832-2003

ՎԻԼՀԷՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ՓԻԼԻՊՊՈՍ ԵՐԿԲՈՐԴԻ ԿԱՅՍԵՐ ՍՊԱՆԻՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱՅՐՆ ՕՌԼԱՆԴԻՆԻ

ԱՆԴ քաղաքի մէջ Ս. Պետրոս անուամբ հին վանքին ժամացոյցն՝ գիշերուան ժամը ութը կը հնչեցնէր։ Արդէն քաղաքն և շրջակայք լռութեան ու խաւարի մէջ ընկղմեր էին. և վանքին մէջ ուրիշ քան չէր լսուեր, բայց միայն քանի մը կրօնաւորաց միակերպ քայլափոխն, որք իրենց առանձնոցները կը քաշուէին։

Ամենայն Սրբոց մեծ տօնին նախընթաց երեկոյն էր. և վերոյիշեալ յարգելի կրօնաւորներն սովորականէն աւելի զբաղումն ունեցեր էին խոստովանարանաց մէջ, յորս ամեն հանդիսաւոր օրեր կը դիմէին քաղմութիւնք հաւատացելոց իրենց խղճին ծանրաբեռնութիւնները դը-

նելու յուսս իրենց հոգևոր հայրերուն։ Յատուկ առանձ-նաշնորհութեամբ՝ վանքին դռներն բաց կը մնային մինչև դիշերուան ժամը ինն՝ ամեն հակման երեկոյ, որպէս զի աւելի դիւրութիւն տրուի այն անձանց՝ որք չէին կարող խոստովանելու գալ՝ բայց միայն օրական աշխատանքէ հանգստանալէ վերջը։ Այն դիշեր ժամը ութին արդէն ամեն ոք մեկնած էր, և կրօնաւորք ալ մի առ մի դնացեր էին, բաց ի մէկէ մի՝ որ մնացեր էր եկեղեցւոյ մէջ։ Այս անձն էր Հայրն Աւդոստինոս Օռլանդինի, խաղալցի կրօնաւորն, որ քանի մը տարիներէ 'ի վեր առանձնացեր էր Մոն-Բլանդէնի վանքը[1], որոյ Աբբայն ընդուներ էր զինքը՝ համաձայն յանձնարարական թղթոյ Սրբազան Քահանայապետին Հռովմայ։

Հօրն Օռլանդինի խոստովանարանն կը դանուէր մութ մասրան մի խորը, որ Փրկչին խաչելութեան պատկերաւ՝ ընծայուած էր սուրբ և ցաւալից Զարչարանաց Յիշատակին։ Այս մասուռն ուրիշ տեղէ լոյս չունէր՝ բայց միայն եկեղեցւոյ դասին մէջ կախուած կանթեղէ մը, որ առ ինքն կը ձգէր եկեղեցի մանողաց և կամ այն տեղ գտնուողաց ուշադրութիւնը, և միանգամայն կը ծառայէր ցոյց տալու եկեղեցւոյն զանազան դռները՝ դուրս ելնելու համար։

Արդէն երկու անգամ աւանդաւոր եղբայրն՝ շարժելով քանալիներու ահագին օղականդոյց մը, եկած ազդած էր ծերունի կրօնաւորին՝ թէ եկեղեցին դատարկ էր, և թէ ոչ ոք այնուհետև պիտի դար խոստովանելու. « Թող դիս, եղբայր իմ, պատասխաներ էր մեկ խաղալցին. դուն չես կարող դիտել՝ թէ երբեմն մէկը խոստովանելու պիտի չդայ, որ ուշ մնացած լինի իւր աշխատանաց պատ-

---

1. Կանդիդ Ս. Պետրոս վանքն կը դանուէր հին ատեն քաղաքէն դուրս եղած Մոն-Բլանդէն բլրոյն վրայ։

ճառաւ և կամ զբաղուած լինի վաղուան տօնին պատրաստութեամբ։ Ա՛ռ այժմ՝ ես միայնակ մտաւորական աղթիս պիտի պարապիմ, և դու լաւ ուշ դիր որ եկեղեցւոյն դռները չգոցես՝ մինչև որ լիուլի ժամը ինն չլինի »։ Բա՛ պատշաճին այս խօսքերէս աղդարարուած՝ քաշուեցաւ աւանդապահն, և թողուց կրօնաւորն իւր առանձին մտածմանց մէջ ընկղմած։ Հայրն Օռլանդինի այնպիսի մտածութիւններով զբաղուած, զորս կ'աղդէին միայնութիւնն և սուրբ տեղւոյն լռութիւնն ու մթութիւնն, միացեալ մարդկային տկարութեանց ծանօթութեան հետ, որք իրեն կը յայտնուէին յանուն Բարձրելոյն Աստուծոյ՝ սուրբ խորհրդարանին դաղտնեաց ներքեւ, երբեմն երբեմն իւր միաքն ու սիրտը կը բարձրացնէր դէպ ի յերկինս, և կը խնդրէր Ներումն այն պակասութեանց՝ զորս կրնար գործել ակաւոր խորհրդոյն պաշտաման մէջ, որոյ մատակարարութիւնն իրեն էր յանձնուած, և կը պաղատէր առ Աստուած՝ շնորհելու իրեն՝ իւր խոստովանողաց հետ ունեցած յարաբերութեանց մէջ սատուածային վարդապետին հայրական դթութիւնը և անճառելի քաղցրութիւնը։

Այսպէս իւր մտածութեանց մէջ ընկղմած՝ չիմացաւ եկեղեցւոյն դրան ձայնը, որ յանկարծ բացուեցաւ և զարնուելով գոցուեցաւ, ինչպէս թէ մղուած լիներ բուռն շարժմամբ դողդոջուն ձեռքէ մը։ Անհամաստ և վախկոտ քայլափոխի ձայն՝ քանի մը մանրերկրորդ լսուեցաւ եկեղեցւոյ միջավայրին մէջ, այնպէս՝ որ կարծես զարհուրագին շրջահայեցութեամբ՝ ամենէն աւելի ծածուկ անկիւնը փնտռէր։ Յանկարծակի դիմեց այդ անձնաւորութիւնն դէպ ի Զաբչարանաց մատուռը, իբրեւ այնպիսի տեղ մը՝ որ իրեն ապահովագոյն երևար ծածկուելու համար. և խոստովանարանին մէջ թագնուեցաւ, ոչ եթէ ապաշխարողի նման՝ որ խոնարհի

աւերք դատարանին առջև, այլ իբրև յանցաւոր մի՝ որ կը պահուրտի վախով դինքը հալածողաց հետաքննութիւնէն, ըստ կարելւոյն անկասկածելի տեղւոյ մէջ։

Ամենեին մտքէն չէր անցներ՝ որ այնպիսի ժամանակ և եկեղեցւոյն դատարկութեան առեն, պիտի գտնէր այն խոստովանարանին մէջ քահանայ մը։ Իւր անդամոց դողդողալէն և ճնշուած կարգ և հաակլեալ շնչառութիւնէն յայտնի եղաւ իւր սարսափն, երբ տեսաւ որ խոստովանութեան դռնակն կամացուկ մը բացուեցաւ, և կրօնաւոր մի՝ զոր ինքն յանկարծակի սթափեցուցեր էր մտածմունքէն, բարեգթութեամբ ծռեց իւր գլուխը դէպ առ ինքն, և ամիսի ու երկիւղած դիմօք պատրաստուեցաւ լսելու իւր մեղաց խոստովանութիւնը։

"Հայր իմ, հայր իմ", մրմնջեց արագութեամբ անծանօթն, նորա վերայ խորին զարհուրանօք լի ակնարկ մի ձգելով, և չհամարձակելով խօսքը վերջացընելու՝ լուռ կեցաւ։ Իսկ կրօնաւորն լռեցուցեր էր նախապատրաստական աղօթքը և Աստուծոյ դթութիւնը խնդրեր էր ապաշխարողին համար, երբ սովորական ձայնով և ոճով բաւ իրեն.

— Լաւ ուրեմն, որդեակ, պատրաստ եմ լսելու. առանց ակնածութեան կատարէ մեղացդ խոստովանութիւնը։

— Մեղացս, գոչեց անծանօթն, որոյ մասերն տընկուեր էին գլխուն վրայ. ոհ, այդ բանին համար չէ որ ես այս տեղ եկած եմ...։

— Ի՞նչպէս... խոստովանելու եկած չէ՞ս, հարցուց կրօնաւորն. որ այն ժամանակ միայն անդրադարձաւ այն ահաւոր սարսափը՝ որ այդ մարդուն ամեն մէկ խօսքերը կը պարունակէին... Ուրեմն ինչո՞ւ համար եկած ես.

— Հայր իմ... ոհ... դթամ վրաս... ազատէ զիս... ես հալածուած եմ Ալբայի դքսին արդարութենէն...

— Ալբայի՞ դքսին։

— Ալբայի դքսին. այո՛, Հայր իմ... այո՛. եկեղեցւոյն դուռը բաց տեսայ, մտայ և ապաւինեցայ այս խոստովանարանիս մէջ։

— Այս խոստովանարանիս մէջ պահուըտելու համար, որդեակ իմ, այս տեղ կարող են գաքեղ դանել։

— Ո՛հ, Հայր իմ, ազատէ զիս, խօսք տուր որ զիս պիտի ազատես... ես ամէն բան քեզի պիտի պատմեմ... Ատուած իմ, Ատուած իմ... ո՛հ, եթէ դիտնայիր թէ ինչպիսի՞ ամենամեծ մեղաւոր եմ ..

— Որդեակ իմ, Ատուած արդար է, բայց նաև գութած է, և երբեք մերժած չէ թողութիւն տալու։

— Կը հաւատամ, Հայր իմ, չկան ուրեմն այնպիսի մեղքեր որ անթողելի լինին... բայց ես, Հայր իմ, աղաղակ կը լսեմ. այս տեղ կու գան, գոչեց եղկելի փախստականն սարսռելով և ահաբեկած. ո՛հ, կորսուած եմ ես .. ազատէ զիս, ազատէ զիս...

Եւ երաւցընէ վանքին մէջ աղաղակ կը լսուէր, և ձայներու և ձիերու սմբակներու խուլ շառաչիւն մը։

— Մի՛ վախեր, պատասխանեց Հայրն Օգանդինի. այս խոստովանարանիս մէջ մնայիր. ոչ ոք պիտի հարմարձակի քնաւ խոստովանարանի սրբութիւնը պղծելու. և եթէ կը համարիս որ կրնաս անկեղծ խոստովանութեամբ յանցանացդ՝ թեթեւցընել սրտիդ ծանր բեռը, պատրաստ եմ լսելու՝ յանուն Յիսուսի Փրկչին և քու երկնաւոր բարեգութ Հօրդ։

— Ո՛հ, Հայր իմ, չեմ գիտեր թէ այդպիսի խոստովանութիւն մի կարելի՞ է ինձ համար... Երկայն ժամանակ է որ... և հիմա ալ սիրտս բոլորովին անպատրաստ է...

— Որդեակ իմ, Ատուած լի է ողորմութեամբ, թող դործած մեղքերդ ծովու աւազներուն հաւասարէն աւելի լինին, անկեղծ զղջմամբ թափուած մի միայն արցունք

բաւական է զանոնք ընդունիլ։ Որդեակ իմ, չարունակեց բարի կրօնաւորն՝ անպատմելի դիպոյ զգացումն ազդող սրտաշարժ ձայնով մի, լի սրտի յուզմամբ և բարեպաշտութեամբ, յանուն այն Աստուծոյն՝ որ խաչին վրայէն ներեց իւր հայհոյիչ չարչարողաց և դահճաց, կ'ըսեմ քեզի, խօսէ և մի վախիր. Յիսուս Քրիստոս սիրոյ անդունդ մ'է...

— Կ'ուզէ՞ս դու որ խոստովանիմ, Հայր իմ, դու կ'ուզէ՞ս, գոչեց մէկէն անծանօթն, քանի մը կաթիլ ջերմն ցաւոց արտասուք թափելով. շատ լաւ, ուրեմն... ես եմ...

Անծանօթին իւր ըսելիքը ցած ձայնով շարունակեց։ Քիչ յետոյ սաստիկ աղաղակ լսուեցաւ եկեղեցիէն դուրս։ Ապաշխարողը սարսափէն լուռ մնաց. և եթէ մթութիւնն այնքան թանձր չլինէր՝ կարելի էր տեսնել նորա տնկուած մազերը և վախէն դեղնած և կնճռած ճակատը։ Քանի մը վայրկենէն եկեղեցւոյն մեծ դուռը բացուեցաւ, և լուսափայլ ճառագայթներ մէկէն նորա հին և ընդարձակ միջնադարեմը պայծառացուցին։ Աղեղնաւորաց [1] բազմաթիւ դունդ մի. որոց կ'առաջնորդէին սպայ մի՝ զինուած ամեն տեսակ զէնքերով և շատ մը ջահակիր կրօնաւորներ, մտան սրբավայրը՝ յանդուգն և միանգամայն պատկառոտ դիմօք։

— Կը տարակուսիմ, ըսաւ կրօնաւորներէն մին ծանր ձայնով, խօսքը դէպ ի սպայն ուղղելով, կը տարակուսիմ, պարոն ասպետ, որ ձեր խուզարկած անձն այս տեղ կարենաք գտնել. եկեղեցին արդէն փակուելու վրայ էր. և եթէ այս տեղ դիպուածով գտնուի մէկն՝ շատ

---

1. Աղեղնաւորք կը կոչուէին նոյն դարուն մէջ արդարութեան ատենին խուզարկու պաշտօնեայք կամ զինուորք։

շատ Հայրն Օռլանդինիի խոստովանորդությունէ մէկը պիտի լինի...

— Ես չեմ հակառակիր որ ձեր ըսածն իրաւացի չը-լինի, պատասխանեց ապայն՝ նշան ընելով աղեղնաւո-ր ոյ յառաջ երթալու. բայց վանքը մանկէն առաջ մեր ընդունած տեղեկութիւններն այնքան մանրամասն են, որ կարելի չէ հաւատալ թէ սխալ լինին այդ ծանօ-թութիւններն։ Վիլհեմ կոմսն այս տեղւոյս մօտ տես-նուեր է. և իրաւունք, արդոյ Առաջնորդ, չեմ կրնար երևակայել թէ ուր արդեօք կրնայ պահուրտած լինել եթէ ձեր եկեղեցւոյն և կամ վանքին մէջ չլինի. ուստի դուք թոյլ տուէք մեր խուզարկութիւնն առաջ տանելու։

— Ինչպէս որ կը փափաքիք, պարոն ասպետ, այն-պէս լրեք։ Մեր Աբբայն ձեզ թոյլատրեց վանքի մուտ-քը, և դուք ազատ էք ամեն կողմ ման գալու. ուր որ ուզէք պատրաստ եմ ձեզ առաջնորդելու։

Ապայն թեթև կերպով գլուխը խոնարհեցուց իբրև ի նշան շնորհակալութեան առ Առաջնորդն, որ տարաւ զինքը եկեղեցւոյն միջին կամարակապին մէջ և այն տեղ ազատ թողլով ապայն՝ ծունր դրաւ դասին մէջ դանուած աղօթարանի մը վրայ, սպասելով որ աղեղնաւորք և ի-բենց ապայն եկեղեցւոյն մէջ չրջան ընելով՝ խուզարկու-թիւնն ի աւարտն։ Աղեղնաւորք շատ չուշացան հաս-նելու այն մատրան՝ ուր փախստականն անշարժ իւր տարտափէն՝ կարծես ջղաձգական դողով պինդ բռներ կպեր էր խոստովանարանին, ինչպէս թշուառ նաւաբե-կեալ մի այն տախտակին՝ որ զինքը ջրոյն երեսը կը բռնէ։

Նոյն իսկ Հայրն Օռլանդինի, որ գիտասրտութեան զգացմամբ այն թշուառին հետ կապուած էր, ազատ չէր տեսակ մի սրտնեղութենէ, լսելով աղեղնաւորաց քայլափոխերը և ջահերու լոյսը տեսնելով, որք արդէն իրենց փայլը ձգեր էին կրօնաւորին մուտ խոստովա-

նարանին վրայ։ — «Ո՛հ, Աստուած իմ. ահա եկան. ես կորուեցայ... Հայր իմ, Հայր իմ, մի լքաներ զիս»,՝ մրմնջեց խղդուկ ձայնով մի ապաշխարողն։ Այս վայրկենին ջահերը բոլորովին լուսաւորեցին մատուռը. քայց խոստովանարանն զետեղուած լինելով մասրան սեղանոյն դէմ առ դէմ, նորա միայն առջևի մասը կ'երևար՝ որ դատարկ էր. մինչդեռ միւս անկիւնն՝ որ մասրան դէզ 'ի խորն էր, կը ծածկուէր իւր մէջ զլուռնուած անձնաւորութեամբ՝ խոստովանարանին այն դուրս ցցուած մասէն, որոյ մէջ կը դտնուէր քահանայն։ Այն ատեն Հայրն Օռլանդինի՝ դլուխը դուրս հանելով՝ ծանր և խիստ ձայնով հարցուց, թէ ո՞վ էին այն յանդուգներն՝ որք կը համարձակէին այն կերպով խառնակել Աստուծոյ տունը և նորա տաճարին վսեմ լռութիւնը պղծել։ — Կրօնաւորին պատկառելի դլուխը տեսնելով, և նորա քաղցր քայց միանդամայն ծանր ձայնէն ապդարարուած, միայն սպայն մտեր էր մասրան մէջ, որ և ինքգինքն արդարացընել ուզելով, ըսաւ.

— Ամենամեծ յանցաւոր մի կը փնտռենք, որ փախած է նորին ուղղափառ կայսերութեան արդարութենէն։

— Հանդարտ թողէք զմեզ, պարոն, պատասխանեց կրօնաւորն, և մի չփոթէք զմեզ մեր սրբազան պաշտաման մէջ։

Սպայն չհամարձակեցաւ ուրիշ բան ըսելու, և առանց քայլափոխ մ'ալ աւելի յառաջ դնալու՝ ետ քաշուեցաւ. և շուտով Ռացած տեղերն՝ ալ խուզարկելով դուրս ելաւ եկեղեցիէն իւր դնդին և իրեն հետ եկող կրօնաւորաց հետ։ Անծանօթն ազատուած էր զարհուրելի քեռանէ մը. և միացընելով երկու ձեռքերը բոլորովին յուզուած և հեծկլտալով՝ քանի մը հատկլեալ բառերով յայտնեց իւր սրտին քովանդակ զգացումը։

— Շնորհակալ եմ, Հայր իմ, շնորհակալ եմ, դուչեց. դուք ինձի համար պահապան հրեշտակի պաշտօն կատարեցիք. ձեզի պարտական եմ կեանքս ալ, ազատութիւնս ալ, և ասոնցմէ աւելի՝ ձեզի պարտական պիտի լինիմ նաև խղճմտանքիս խաղաղութիւնն ալ։

— Աստուծոյ շնորհակալ եղիր, որդեակ իմ, պատասխանեց կրօնաւորն. դուն մեղաւոր էիր և ինքն քեզի ժամանակ կը շնորհէ ղղջալու և եղերանդ դարման տանելու։

— Ո՛հ, ո՛չ, Հայր իմ, իմ եղերանս դարման ընել ուրիշ կերպով կարելի չէ, բայց եթէ արտասուելով, եղեռնագործութիւնս կատարեր լինցուցեր եմ. և զոհն այս աշխարհիս մէջ չէ, և երկնքէն՝ ուսկից կը տեսնէ իմ խղճի խայթերս, միայն երկնքէն կրնայ ինծի նեղսումն շնորհել։ Հայր իմ, այս վայրկենիս կարդէ դուրս արտի յուզման մէջ կը գտնուիմ, և չեմ կարող իմ դարձիս գործը լինցընել։ Կը փափաքիմ նախ և առաջ կենացս թշուառ պատմութիւնն ընել ձեզ. ձեզի պարտական եմ կեանքս, և կը փափաքիմ որ գիտնաք ո՞վ է այն թշուառականն՝ առ որ դուք այսպիսի մեծ բարիք ըրիք։

Հայրն Օռլանդինի ոտք ելաւ, և ըսաւ անծանօթին. «Եկուր իմ սենեակս, և այն տեղ քեզի կարելի կը լինի փափաքած մանրամասն տեղեկութիւններդ ինձ հաղորդել»։

ԳԼՈՒԽ Բ.

ԿՈՄՍՆ ՎԻԼՀԷՄ ՎԼԱԴԵՍԼՈՒ

—☼—

Առանց խօսելու դէպ 'ի վանք դնացին, և հապիւ թէ կրօնաւորին սենեակը մտան, անծանօթն այս խօսքերով սկսաւ իւր պատմութիւնը.

— Ծնողքս Բրիւդ քաղաքին ազնուական դասակարգի ընտանեաց մէջ նշանաւոր են. լսած լինիք գուցէ Վլադեսլու անունն...

— Վլադեսլո՞, մէկէն դոչեց կրօնաւորն՝ սաստիկ յուզմամբ պլլպլած ձայնով, և դո՞ւ ես, դու...

— Վլադեսլու կոմսին, Ադոլֆ Վանդէր Օպտարէ տէնի որդին, վրայ բերաւ ապաշխարողն, զարմանալով Հօրն Օուլանդինիի խօսքերէն արտայայտուած յուզման վրայ:

— Վիլհէմ. դոչեց դարձեալ կրօնաւորն, թերև անթիւ խորհրդաւոր և հեռաւոր յիշատակաց բեռան մի ներքև ճնշուած. Վիլհէմ... Աղդարութիւն երկնից...

— Այդ իմ անունս է, այո՛, այդ է անունս, Հայր իմ, վրայ բերաւ ապաշխարողն, առաջին անգամէն ա-ւելի զարմանալով այն տարօրինակ յուզման վրայ՝ զոր այդ ծանօթութիւնն ազդեր էր կրօնաւորին: Հայր իմ, հարցուց նա վրդովուած ձայնիւ, դուք զիս կը ճանաչէ՞ք, դուք ճանչցի՞ր էք իմ ընտանիքս...

— Այո՛, որդեակ իմ, պատասխանեց կրօնաւորն՝ քիչ մը հանդարտելէ վերջ և աւելի տխուր ձայնով. քու անունդ մտաց մէջ արթընցուց քանի մը յիշատակներ

մանկութեան, երիտասարդութեան... Ես ճանչցեր եմ քու պատուական յարգելի հայրդ....

— Աւաղ. արդեօք պիտի կարենամ սրտիդ մէջ վրաս գթոյ կաթիլ մ'անգամ մնալ, երբ դիտնաք թէ ինչպիսի եղերամքք անպատուեր եմ ես այդ յարգելի անունը, և աղտեղեր եմ խղճմտանքս...

— Որդեակ իմ, մի վախեր. Աստուծոյ գթութիւնն անհուն է, և դու ինծմէ ուրիշ բան մի յուսար, բայց եթէ քաղցրութիւն խղճմտանացդ դառնութեանց և դիւրութիւն փրկութեան ճանապարհին:

— « Ո՛հ, շնորհակալ եմ, Հայր իմ, ձի՛ր տուած սուրբ մխիթարութեանդ: Երկար տարիներէ 'ի վեր սիրտս բորբոքեալ հնոցի կը նմանէր, բայց ձեր խօսքերն ինծի այսօր կը թուին իբրև քաղցր և զովարար ցող մը. ահ, թնչպէս պատրաստ է սիրտս յայտնելու ձեզ հիմա իւր նաև ամենախոր վէրքերը, թէպէտև զարհուրելի լինին: Հայր իմ, ասկէ քսան տարի առաջ՝ ես Աղոլի Վլադեսլու կոմսին երկրորդ որդին էի. այն ժամանակ ինծմէ շատ տարիներով աւելի մեծագոյն եղբայր մ'ունէի, որ անդրանկութեան իրաւամբք՝ պիտի ժառանգէր մեր ընտանեաց հարստութիւններն և պատիւները: Փիլիպպոս (այս էր եղբօրս անունն) դեղեցիկ էր, բարեկազմ, լի առաքինութեամբք և հաճելի ձիրքերով, որով ամեն զինքը ճանչցողներուն սիրելի կը լինէր: Մասնաւորական մեծ զարգացման հետ՝ ունէր նաև ամենաջերմ քարեպաշտութիւն և ամենաբարձր արիութիւն: Դեռ երիտասարդ ժամանակ՝ Կարոլոս Ե. կայսեր հետ պատերազմի մանելու պատիւն և զինքը մարտակուռ մի մէջ պաշտպանելու բախտն ունեցեր էր, նորա տեղ վէրք ընդունելով: Այսպէս ամեն մարդ զինքը կը սիրէր և պատուէր, և հայրերնիս՝ Վլադեսլու կոմսն՝ պարծանք կը ցուցնէր զինքը ամենուն իբրև իւր անուան ժառանգորդ:

«Թէպէտ և Փիլիպպոս շրջապատեալ էր այնքան բարեսէր և մեծարող անձերէ, բայց այն ատեն՝ նոյն իսկ իւր ընտանեաց մէջ կար մէկ մի՝ որ իրեն դէմ մաղցու առելութիւն ունէր։ Այդ մէկն՝ ես եմ. այո՛, Հայր իմ, ես ինքս. և դուք լացէք իմ թշուառութեանս վերայ...։ Ո՛րքան եղբայրս համեստ և աղնուասիրտ էր, այնքան ալ ես հպարտ և նախանձոտ. կը նախանձէի նորա հանճարոյն, նորա սիրելի ձիրքերուն, նորա ամենէն ընդունած յարգանաց և սիրոյն. որտի կատաղութեամբ կը լսէի իրեն տրուած գովեստները, և ցաւօք կը մտածէի այն ամեն պատուանուանց և ամեն ժառանգութեանց վրայ, զորս նա պիտի վայելէր և ես պիտի զրկուէի։ Կ'անիծէի ես քահանին անարդարութիւնը, որ ամեն բան Ներսէհ էր եղբօր մի՝ զոր ես կ'ատէի։ Կ'անիծէի ես իմ թշուառութիւնս՝ առանց մը-տածելու որ անոր ծագումն իմ չարակամութենէս, իմ վատ բնաւորութենէս յառաջ կու գար, քան թէ ըստ ինքեան իմ վիճակէս։ Այդ զիս կեղեքող նախանձով կուրացած և փառասիրութեամբ քոլորուին վիքացած՝ չէի իմանար որ վիճակս անհաւասարութիւնն Նախախնամութեան ամենէն իմաստուն կարգադրութիւններէն մին է, որով կը պահպանուի մարդկային ընկերութիւնն. իմ ախտերս՝ որոց դէմ ամենևին մաքառիլ չէի ուզեր, արգելք կը լինէին ինձ խորհրդածելու՝ որ եթէ ես եղբօրէս ստորնադոյն էի, ինքն ալ դեռ չատ մարդիկ ունէր իրմէ վերադոյն՝ մարդկային ընկերութեան սանդղամատանց վրայ, և թէ ինծմէ ցածադոյն դեռ հազարաւորք կային, որք կարող էին նախանձիլ իմ քահանայ վրայ, եթէ երբեք այդ անարդ կիրքը իրենց սրտին մէջ սնուցանէին։

«Երիտասարդութեանս առաջին տարիներն այսպէս սահեցան ամեն տեսակ նախանձու տանջանաց. բայց ես

այնքան կը կեղծէի սրտիս զգացումները՝ որ դրսէն բը-
նաւ տգեղ նշան մի չէի ցուցըներ, այլ այդ տանջանք-
ներն ես ինձ համար ներսս կը պահէի, և արտաքին սի-
բոյ երեւութի ներքև՝ եղբօրս նկատմամբ այնպիսի ա-
ռելութիւն կը մնուցանէի՝ որ սարսափելի եղեռնագոր-
ծութեամբ պիտի կնքուէր։ Գրեթէ քսան և հինգ տա-
րեկան էի, երբ հայրս իմացուց որ մտադիր էր ան-
դրանիկ որդւոյն հարանախօսութիւնը կատարելու, և թէ
մեր ընտանեաց փառաւոր անունը շարունակել տալու
համար՝ առաջարկած էր Բրէյնը–Լալլէնդ իշխանին՝ ըն-
դունելու նորա դստեր հաւանութիւնը Փիլիպպոս եղ-
բօրս համար։ Էս ուրախակից կը լինէի հօրս և եղբօրս
այդպիսի գեղեցիկ զուգութեան մի մտածութեան հա-
մար. բայց ներքսապէս կ'անիծէի ես այնպիսի ամուսնու-
թիւն մի, որ եթէ կատարուէր՝ ինծմէ կը յափշտակէր
նաև այն յետին յոյսն՝ զոր կրնայի ունենալ օր մի՝ հօրս
ժառանգ լինելու։ Փիլիպպոս այն տեսն երեսուն տարիէն
աւելի ունէր։ Կրնաք երեւակայել իմ քուռն կատաղու-
թեանս կիրքը՝ երբ քիչ ժամանակէ վերջը՝ տեսայ որ նա-
մակ մի հասաւ՝ կնքուած Բրէյնը–Լալլէնդ ընտանեաց զի-
նանշանով, որ հօրս կ'աւետէր՝ թէ իշխանն յանձնառու
կը լինէր շնորհելու Փիլիպպոս եղբօրս իւր զղեկին
մուտքը։

«Շուտով մեկնեցանք՝ հայրս, մայրս, եղբայրս և ես
դէպ 'ի Հէնոյ գաւառն, ուր կը գտնուէին իշխանին կա-
լուածներն։ Ամենաշքեղ հիւրընկալութեամբ ընդունուե-
ցանք. և Բրէյնը զղեակը կեցած ամբողջ ժամանակներս
փառաւոր հանդէսներ տեղի ունեցան, որոցմէ վերջը կա-
տարուեցաւ օրիորդ իշխանուհւոյն հարանախօսութիւնն՝
Փիլիպպոս եղբօրս հետ։ Տեսնելով Մարիամու գեղեցիկ
կատարելութիւնները, ճանաչելով նորա առաքինութիւն-
ները, նորա հրեշտակային քաղցրաշնչութիւնը, դիտեսը-

տութիւնն և բարեգործութիւնը, այս ամենն աւելի ևս սատակացուցին սրտիս մէջ Հղբօրս դէմ ունեցած նախանձու հնոցը։

«Պահպանութիւնն որոշուած էր քիչ ժամանակէ վերջը կատարուելու, որ իմ փափաքանաց հակառակ՝ աբրազ արագ կը մօտենար, երբ յանկարծակի Բրէյնը–Լալլէնդ իշխանուհւոյն մահն, որ օրիորդ Մարիամու մայրն էր, արգելք եղաւ պատրաստութեանց, և ժամադրութեան՝ կէս տարի յետաձգուելու պատճառ եղաւ։ Այս խափանման յաջորդեց ուրիշ մ'ալ որ դիս ուրախութեամբ լեցուց, իսկ Հղբօրս ամենախորին տխրութեան առիթ եղաւ։ Կայսրն յանձնեց իրեն ամենակարևոր նուիրակութեան մի պաշտօն Սրբազան Գահանայապետին մօտ, որով հարկ էր Հռովմ մեկնիլ։ Մեծանակ չ'երթալու նպատակս՝ խնդրեց ինծմէ որ իրեն ընկերեմ։ Այս առաջարկն ես կարդէ դուրս հաճութեամբ ընդունեցայ, մտքս դնելով որ կարենամ այնպիսի միջոցներ գտնել՝ որով իրեն չկարծածին չափ Իտալիոյ մէջ մնար։

«Ճամբայ ելանք՝ հրաժարական ողջոյն տալով հօրս, մօրս, ինչպէս նաև Լալլէնդ իշխանին և նորա պաշտելի դստեր։ Ուղևորութիւնիս յաջող և արագ եղաւ։ Գահանայապետը Բոլոնիա քաղաքին մէջ դտանք։ Փիլիպպոս իւր նուիրակութեան գործը այնքան իմաստութեամբ և ազնուական քաղաքագիտութեամբ գլուխ տարաւ, որ թէ քահանայապետական և թէ կայսերական արքունեաց լիուլի գովեստից արժանացաւ։ Բայց Կարոլոս Ե. կայսրէն յանձնարարուած քանի մի գործեր՝ դեռ եղեալքս Իտալիոյ մէջ կը բռնէին։ Գահանայապետին հետ ուղեկից եղանք դէպ 'ի Հռովմ։ Ես կը փափաքէի որ այդ գործերն երբեք վերջ չունենային. բայց քանի մը շաբաթ Հռովմ կենալէ վերջը, Փիլիպպոս իւր գործերը լաւ մը կարգի դնելէն յետոյ՝ խմացուց որ պիտի մեկնինք։ Զարմանալի

մտածութիւնք զիս կը խղդէին. կարդէ դուրս կ'ատէի եղբայրս. ամեն բան այլ աւելի էի՝ միայն թէ կարենայի նորա դէմ 'ի Փլանդրա վերադարձը խափանել. և չէի կարող որոշել թէ ինչ հնարք բանեցընեմ որ առանց կասկածի ենթարկուելու՝ իմ նպատակս հասնէի։

« Դիպուածն՝ կամ լաւ ևս ըսեմ՝ չարադործ ատանան առջևս հանեց պարագայ մի։

« Մեր համբաւ ելլելիք օրէն քանի մ'օր առաջ Պոմպիլիանի մարկիզն հրաւիրեց զմեզ շքեղ հանդիսի մը, որ պիտի կատարուէր իւր Վիլլայէն մէջ, Հռովմէն քանի մը մղոն հեռաւորութեամբ։ Ատելութիւնս այնքան սաստիկ էր՝ որ չէի կարող եղբօրս ուրախութիւնը տեսնել՝ առանց սրտի յուսահատութեան ենթարկուելու։ Պատճառ բերի տկար լինելս՝ մարկիզի հրաւէրը չընդունելու համար. և փիլիպոս միայն գնաց հանդիսին։ Երկու օր բացակայ պիտի դառնուէր։ Առաջին օրուան իրիկունը՝ երբ Հռովմայ անմարդի կողմերէն շրջագայելէ ետ կը դառնայի, մէջս ինծի հետ կրելով դժոխային մտածութիւններս, որք վայրկեան մ'ալ զիս հանդիստ չէին թողուր, յանկարծ վրաս յարձակեցան երկու աւազակներ, իւրաքանչիւրն առ ինս ուղղելով իրենց փոքրիկ ատրճանակներուն փողերը և քսակս պահանջելով։ Ցիրենք տեսնելով ոչ միայն չսարսափեցայ, այլ մէկէն քսաներեք ուրախութիւն զգացի. զարհուրելի մտածութիւն մը միտքս ընկաւ։ Հանեցի քսակս, և մէջն եղածը ցուցընելով աւազակաց՝ իրենց տուի, և հարցուցի թէ կը փափաքէին արդեօք քանասպատիկ այնչափ վատբերիլ։ Վայրենի փայլ մ'իրենց աչաց մէջ շողշողաց... կը զողամ ես միտքս բերելով հիմա այդ առեւի յիշատակը...։ Այդ մարդասպանք՝ որ ամեն բան ոսկւոյ համար կը կատարէին՝ մէկէն 'ի մէկ հակառակ իմ խորհուրդս։ Ըստ կարելւոյն նկարագրեցի իրենց Փիլիպ-

պոսի նշանները, և երդումն ընել տալով՝ որ գաղտնիք պահէին և դիմքը մէջտեղէն վերցնէին, յայտնեցի իրենց նաև եղբօրս և Պոմպիլիանի մարկիզին անունները, որոց մօտ կը գտնուէր, յանձնարարելով՝ այնպէս գործ տեսնեն՝ որ քնաւ մարդ չիմանայ կամ անդրադարձայ։ Այս պայմաններով խոստացայ տասն հազար դուկատ բաժնելու իրենց, գործը կատարուելէն երեք օր վերջը՝ նախանշանակեալ պանդոկի մը մէջ։ Երբ մենք այս ամբողջ եղեռնական գաւի մասին համաձայնեցանք, տուն վերադարձայ և անկողին մտայ, ձեւացրնելով իբր թէ սաստիկ ջերմէ բռնուած լինիմ։ Սենեկապետս գնաց բժիշկ կանչելու։ Զգայած կարդէ դուրս յուզումս կարծել տուաւ բժշկին, թէ իրաւցընէ հիւանդ եմ. ուստի յանձնարարեց որ հանգիստ մնամ և մեղմիչ ըմպելիներ օրենադրեց։ Երկրորդ օրն ամբողջապէս անկողին մնացի։ Այն սրտնեղութիւնն՝ որով վայրկենէ վայրկեան կը սպասէի եղեռնական գործոյս յաջողութեան լուրը լսելու՝ ստուգիւ հիւանդի մը արտաքին կերպարանք կուտար ինծի, և մեր ուղեկից ծառայք, զորս եղբայրս մօտս թողուցեր էր, ինծի կ'երևէր թէ անհանգիստ էին վիճակիս վրայօք։

« Գիշերուան դէմ բաղմութիւն կառայ մեր թշնամին դրան առջև հասան։ Սենեկապետս փութայ իմաց տալու ինձ որ Պոմպիլիանի մարկիզն եկեր էր. ես զարմանք ցոյց տուի։ Մի և նոյն վայրկենին ձայն տուին որ ինծի կու գայ նորին մեծութիւնն՝ Պոմպիլիանի մարկիզն և նորին վեհափառութիւնն Կարդինալ Կոլոննա։ Երկուքն ի միասին մտան ննջելու սենեակս։ Ցիրենք տեսնելուս պէս՝ մէկէն ելայ նստայ անկողնիս մէջ և ճշմարիտ տագնապով սրտի, որպ պատճառն իրենց կարծածէն բոլորովին տարբեր էր, ակսայ կանչել. « Դուք, տեարք, այս տեղ և այս ժամուս... Ո՞ւ եղբայրս, ո՞ւր է եղ-

բայրս... »։ Երկուքն ալ իրարու երես նայեցան այլայլած դէմքով. բոլորովին գոյներնին նեաեր էին. կարծես իրարու խորհուրդ կը հարցընէին։ Այն ատեն ես դեռ աւելի սրտի յուզումն կեղծեցի. « Եղբայրս, եղբայրս, ազնիւ Փիլիպպոս, ո՜հ, ըսէք ինծի ո՞ւր է, ինչ եղեր է » կը գոչէի, այնպիսի շարժումն ընելով իբր թէ ինքզինքս անկողնէս վար ձգել ուզէի։ « Ատուծոյ սիրոյն համար՝ հանդարտ կեցիր, սիրելի պարոն բատ Կարդինալն, կ'ըսենք քեզի... ամենաղաւն դժբախտութիւն մ'է եղածը »։ — « Ատուած իմ, կը գոչէի ես, արդեօք հիւանդ...»։ — " Եւ ամենածանր » պատասխանեց Նոբին վնասմտաութիւնն, այս կերպով խօսքին սկիզբն տալով սարսափելի դժբախտութիւնն ինձ յայտնելու համար։ Վերջապէս, Հայր իմ, բաւական է որ ըսեմ՝ թէ արտաքսակէս ամենաղաւն ցաւոց ցոյցերով իմացայ քսանեակի սրտահաճութեամբ՝ որ առաւօտուց 'ի վեր խեղճ եղբայրս Պոմպիլիանի Վ.ԷԼԼԷ ծառաստանին մէջ շրջագայելու գնացած լինելով՝ այլ ես չէր երևեցած։ Դրդեկէն քիչ հեռու դաեր էին իրեն գլխարկը և արիւնաթաթախ սրոյ կապարանը, որոց տեսիլն՝ մարկիզի տունը դանուողաց ամենուն վրայ սոսկումն բերած էր։ Դաղրեցուցեր էին հանդէսը. և ինչ խուզարկութիւն և հետաքրնութիւն որ կատարեր էին մինչև գիշերը՝ բնաւ արդիւնք չէր ունեցած։ Վերջապէս համոզուեր էին թէ Փիլիպպոս ապանուած էր. և բնաւ կարելի չեղաւ որ իմանան թէ ինչ պատճառէ մղուած էին մարդասպանք։ Մարկիզն՝ որ իմ հիւանդ լինելս գիտէր՝ նոյն օրուան իրիկունը Հռովմ հասեր էր. և քանի մը ժամ այս դժբախտ դէպքին վրայօք զանազան անձանց հետ խօսակցելէ վերջը, խնդրած էր Կարդինալ Կոլոնայէն որ քարեհաճի այս տխուր լուրն ինձ տալու պաշտօնն ստանձնել։

« Քանի մ'օր արտաքոյ կարգի զգածուած երևցուցի

ինքզինքս։ Հրաման տրուեցաւ Հռովմայ բոլոր քաղաքապահ զինուորաց՝ ոտք ելլելու և մարդասպանները դանելու. և ես ինքս մասամբ մի այդ խուզարկութեանց ուղղութիւն տալ կը ձեւացընէի։ Այս մ'անցաւ վրան, այլ և տարակոյս չմնաց Նորա ստուգիւ մեռած լինելուն։ Սրբազան Վահանայապետն հրամայեց որ Հռովմայ բոլոր եկեղեցեաց մէջ եղբօր հոգեհանդիսաւոր պաշտամունք կատարուին. որոյմէ վերջը ճամբայ ելայ Փլանդրա վերադառնալու համար։ Պապէն առ կայսրն ուղարկուած սուրհանդակ մի՝ գոյժ տարեր էր արդէն Նորա նուիրակին դժբախտ կատարածին և անյայտանալուն վրայօք. մի և նոյն սուրհանդակին յանձներ էի և ես՝ նամակներ ընտանեաց համար։ Նորին կայսերական վեհափառութիւնն՝ Կարոլոս Ե. կարգէ դուրս վրշտացած էր այս դժբախտ արկածին համար, և ինքն անձամբ ուզեր էր իմացընել զայն ուղղակի հօրս։ Այրս այդ տխուր գոյժը լսելով՝ ցաւէն մեռած էր. և եթէ հայրս ինքն ալ չմեռաւ՝ դուցէ մեռնելէն առաջ զիս տեսնելու փափաքն՝ զինքը դերեզմանին եզերքը բռնեց։

« Ես իւր ցեղին վերջին յոյսն էի. և երբ զիս տեսաւ, զիս՝ որ եղեռնագործ սպանող էի եղբօրս, դըրկիս մէջ մարեցաւ։ Ես ալ իրեն հետ կու լայի. որչափ որ կարող էի՝ կեղծեցի այն ահաւոր խղճի խայթերը որ զիս կը կեղեքէին։ Քանի մը շաբաթ վերջը՝ հայրս իմացուց որ զիս ամուսնացընել կ'ուզէր, և թէ խնդրեր էր Բրեյնը–Լալլենդ իշխանէն՝ որ այն խոստումն որ Փիլիպոսի համար ըրած էին՝ նոյնը ինծի համար եղած համարէին։ Ես խորշումն կը զգայի հարսնացընելու ինձ եղբօրս նշանածը. բայց Վալդեսլու կոմսն շուտով իմ կեղծ խղճմտանքս հանդարտեցուց։ Մարիամ իշխանուհի օրիորդն՝ որ եղբօրս նշանածն էր, ինձ նկատմամբ ցուրտ անտարբերութիւն մ'ունէր։ Իւր սիրելւոյն մահը ոչ-

բալէն վերջը՝ կ'ուզէր ամուսնանալէ հրաժարիլ. բայց միայն հօրը հնազանդելու համար յանձն առաւ ինձ հետ ամուսնանալ. որովհետև բարեպաշտութեան և խմաստութեան հետ՝ կը սիրէր իւր հայրը հշմարիտ սիրով։ Վերջապէս Փիլիպպոսի մահուանէն տասնհուինգ ամիս յետոյ՝ կատարուեցաւ մեր ամուսնութիւնն իշխանին դղեկին մէջ. և եթէ չլինէին խղճի խայթերս, որք մանաւանդ այն ատեն արթընցան՝ առանց այլ ևս թմրելու, ես մարդկանց ամենէն երջանիկն պիտի լինէի։

«Դատեր մը ծնունդն սրտիս փափաքները պսակեց, և յոյս տուաւ հօրս՝ որ իւր ցեղը պիտի շարունակուէր։ Փիլ վերջը մեռաւ նաև հայրս, և իւր մահուամբ ընտանեացս հարստութեանց հետ՝ թողուց ինծի նաև այնքան փառասիրութեամբ փափաքածս՝ Վլադիսլաս կոմս պատուանունը, զոր զղուելի սնբաղդութեամբ ստացեր էի։ Այն ժամանակ ուզած ամէն փափաքանացս հասեր էի, բայց որչափ հեռու կը դանուէին երջանկութենէ. խղճմտանքս վայրկեան մ'ալ ինծի խաղաղութիւն չէր տնորհեր։ Օրուան մէջ հազարումէկ փառասիրութեան մտածմունք դիս կը չարչարէին, և գիշերները երազիս մէջ կ'երևէր Փիլիպպոս եղբայրս, որ վերքերը ցուցնելով ինծի՝ երեսիս կը զարնէր ահաւոր կերպով իմ բրած վատ դաւաճանութիւնս։ Շատ անգամ ցուրտ քրտինքով պատած՝ կ'արթննայի, և հոգեվարի պէս դըժուարութեամբ խուսալով հազիւ կրնայի շնչել։ Կինս ահաբեկած կը հարցնէր թէ ինչ ունէի. խեղճ Մարիամ, միթէ կրնա՞ր կասկածել անգամ թէ ես իրեն նշանածին սպանողն էի։

«Ոչ փառասիրութեանս յաղուրդը, ոչ արքունեաց մէջ գտած պատիւներս, ոչ Կարոլոս կայսեր սէրն չկարողացան սիրտս խաղաղել։ Իսկ մանկիկ Ալեքսիսայ տեսիլն՝ միայն տխուր ժպիտներու պատճառ կը լինէր. նորա

նմանութիւնն եղբօրս հետ՝ շատ զգալի էր, որով ամէն անգամ տեսնելուս՝ չէի կարող չվրդովուիլ. և այդ՝ սկզբնաւորութիւնն էր աշխարհիս վրայ կրելիք պատիժներուս։ Մեր ամուսնութեան չորրորդ տարւոյն մէջ Մարիամս՝ սիրելի հարսիս մահն՝ ինձ համար անսպառելի ցաւոց աղբիւր մ'եղաւ։ Ազջիկ զաւակ մը միայն ունեցեր էի իրմէն, որով զրկուած կը մնայի՝ անունս, հարստութիւնս և տիրոջանելու որդւոյ մի ժառանգելոնելու երջանկութենէն։ Դարձեալ այս ամէն նեղութեանց մէջ ուրիշ մխիթարութիւն չունէի, բայց եթէ փոքրիկ Աբրահամս, որոյ անմեղ և չնորհալի կերպարանքն թէ սիրանք և թէ ցաւ կը պատճառէր ինծի։ Ո՛չչափ կը մեծնար՝ այնքան ալ թշուառ եղբօրս հետ ունեցած նմանակցութիւնն կ'աւելնար։ Ես կը սիրէի միշտ զինքը տեսնել, և միշտ ալ իւր տեսիլն ինծի համար մշտաւառ յանդիմանութիւն մ'էր, որ սիրտս ամենասուր խղճմտանաց խայթերով կը վիրաւորէր։ Այսպէս քանի տարի անցաւ, երբեմն Բրիւդ քաղաքը մնալով ընտանեաց հետ և կամ իմ զբաղեալներուս մէջ, և երբեմն արքունեաց մէջ, որովհետև կայսեր սենեկապետն էի։

« Կը հասնիմ այժմ, Հայր իմ, այս ամբողջ աղետալիր պատմութեան վերջաբանին։ Այնքան սիրտս կեղեքող տանջանաց մէջ կը յուսայի՝ որ այնչափ տարիներ անցնելէն վերջը՝ ոճրագործութիւնս ծածկուած մնար, և թէ միայն խղճմտանացս խայթերն ինծի պատուհաս լինէին։ Բայց ոչ. Աստուած՝ որուն երբ հաճոյ լինի՝ կընայ հասնիլ ամբարշտին վրայ՝ կը պատրաստէր կամաց կամաց իւր վրէժինդրութիւնը։ Այն երկու աւազակներն՝ զորս առաջ կաչառեր էի եղբայրասպանութիւնս գլուխ հանելու համար, այս տարի Հռովմայ մէջ բռնուեցան, և դատապարտուած լինելով շատ մը մարդասպանութեանց համար՝ յայտներ էին իմ անունս ալ, և մանրամասն տեղե-

կութիւն տուեր էին դատաւորաց այն ամէն վերաբերու-
թեանց մասին, որք իմ և իրենց մէջ տեղի ունեցեր էին
քսան տարիներէ առաջ։ Նորին վեհափառութիւնն՝
Հռովմայ նախարար Կարդինալն՝ փութացեր էր Սատ-
բին-Նահանգաց վարչութեան ուղարկելու այն երկու ա-
ւաղակաց դատաքննութեան գործերը։ Այսու հանդերձ
այդ հարցաքննութեանց մէջ իմ վրայօքս եղած տեղեկու-
թիւնք այնքան անորոշ էին և այնքան ալ երկար ժամա-
նակ անցեր էր վրան, որ հետախուզութեան պիտի չ'են-
թարկուէր, եթէ Ալբայի դքսին խորհրդականաց մէջ
թշնամիներ չունենայի։ Նոյն իսկ դուքսն վրաս համարումն
ունէր. բայց երբ գործերն իւր գաղտնի խորհրդարանին
մէջ քննուեցան, այն ատեն վճռուեցաւ հետապտուռ-
թիւնն։ Այսօր հրաման եղած էր զիս կալանաւորելու.
բարեբախտաբար խորհրդականներէն մին՝ որ բարեկամս
է, իմաց տուաւ ինձ դէմ լարուած հնարքները, և հաս-
կըցուց միանգամայն՝ որ եթէ կարելի չլինի բերնէս խոս-
տովանութիւն լսել յանցանաց՝ զիս պիտի ենթարկէին
հարցաքննութեան առանձնաց։

« Մտածեցէք, Հայր իմ, թէ ինչպիսի դարհուրանք կը-
բեցի այս գուժին վրայ։ Շփոթած, բոլորովին ինքիրմէս
դուրս եղած, խղճիս խայթերէն հարուածեալ՝ չէի գիտեր
ինչ լինելիքս և կամ ինչ ընելիքս։ Այն վայրկենին լի
սարսափով վազեց հասաւ առնս հին ծառաներէն մին, և
իմացուց որ Ալբայի դքսին աղեղնաւորներն դէպ իմ
տունս կու գային։ Բրիւքսել կը գտնուէինք. և ծառան չէր
կրնար գիտնալ թէ ինչ յանցանօք ամբաստանուած էի.
բայց Ալբայի դքսին հռչակուած խստութիւնն՝ ընդդէմ
այն անձանց՝ որք ամենաթեթև անգամ անհաւատարմու-
թեան կասկածանաց ենթարկուէի Փիլիպպոս Բ. կայսեր
դէմ, ծեր ծառային արդարացի սարսափանաց պատճառ
եղած էր։ Հրամայեցի իրեն որ չուտով ձի մը թամբէ. և

իրեն յանձնարարելով աղջիկս, պարտիզին դռնէն դուրս թռաւ, և ձին արշաւասրտ վազցընելով Կանդի համբան բռնեցի, ուր կը յուսայի բարեկամաց մէկուն քով պա-հուրտիլ։ Շուտով եռաւէս ընկան. և այնքան արագ՝ որ կարելի չեղաւ ինձ Կանդ հասնիլ։ Ալբայի դքսին մարդիկ-ներէն շատ առաջ. իրենց միջոց գտան նաև համբուս առ-ջևը կտրելու՝ երբ քաղաքը մտնելու վրայ էի։ Այն ատեն ձիէս վար ցատքեցի, և թողլով զնոյն արձակ՝ դիմեցի զահուրտելու Մոն-Բլանդէնի շրջակայքը, և վերջապէս հասայ մոսյ վանքը։ Մնացածն ձեզի ծանօթ է, Հայր իմ, որովհետև դուք ինքն ազնուական զթով զիս ծածկեցիք թշնամեացս ձեռքէն։ Այո՛, անարժան եմ ես այսպիսի զթութեան, խեղճ եղբօրս արեամբ շաղախուած կ'ուզէի ես եղեռնս քաւել և ինքզինքս անձամբ կամովի արդա-րութեան ձեռքը տալ երկնից բարկութիւնը դիմացընելու համար, որ զայրացած է այսչափ երկար ատեն անպա-տուհաս մնալուս... բայց աղջիկս, բայց քաղցր, սիրելի, առաքինի զաւակս, ո՜հ, պէտք է որ ինքն ալ մասնակցի պատժոյ և վատահամբաւութեան հօր մի՝ որ լիուլի մե-զապարտ է... թող առնէ վերցընէ ինծմէ Աստուած իմ կեանքս, բայց թող խնայէ միայն իմ Ալբերտիայս...»։

ԳԼՈՒԽ Գ.

ԿԱԼԱՆԱՒՈՐՈՒՄՆ

Կոմսն խօսելէ դադրեցաւ. բայց իւր հառաչանքներն, իւր արտասուքն, իւր հեծկլտանքներն յայտնի վկայ էին նորա ապաշաւանաց և միանգամայն դատեր վիճակին վրայօք զգացած ցաւոց։

Հայրն Օ"լանդէնի կարծեաց մասնակից էր նորա վշտաց, և այս պատմութիւնս լսած ժամանակ քանի մը կաթիլք արտասուաց ուռղեր էին նորա արտևանունքը։ — «Որդեակ իմ, սկսաւ ըսել վերջապէս՝ ազդու և տխրութեամբ զգածուած ձայնիւ, սրդեակ իմ, քու գործած ոճիրդ յայտնի է որ ամենամեծ է, բայց ոչ աններելի։ Ատուած՝ հաճելով խոնարհութեանդ և զղջմանդ վրայ, այնպիսի դիմութիւն և շնորհք պիտի ցուցընէ քեզ անշուշտ, որոց խորը մենք չենք կարող հիմակուընէ թափանցել։ Վստահ եղիր իրեն վրայ, և հաւատա որ եթէ եղբայրդ այս տեղ կարենար իւր ձայնը լսելի ընել՝ պիտի իմացնէր որ քեզի ներուն կը շնորհէ»։

Կրօնաւորին խորհրդաւոր ձայնն և սրտառուչ զգացումն՝ որ այդ խօսքերուն հետ զուգուած էր՝ կարծես Վիլհէմի վրայ խորին ազաւորութիւն գործեցին։ Ջերմեռանդեամբ միացուց ձեռքերը և խոնարհեցուց գլուխը այնպիսի ուրախութեան զգացմամբ՝ որոյ փորձն ունեցած չէր մինչև այն օր, և խնդրեց Հօրէն որ լսէ իւր խոստովանութիւնը, և խոնարհ ամբաստանութիւն մ'ըրաւ կենացը մէջ գործած մեղքերուն։ Երբ լսեց յարդելի

Հօրը ձայնը՝ որով երկնից գթութիւնը իւր վրայ կը պա-
զատէր և արձակման խորհրդական խօսքերը կը զուրցէր,
չկրցաւ իւր յուզմունքը զսպել, այլ բեկեալ սրտիւ սկսաւ
հեղձամղձուկ հեկեկալ, և քանի մը վայրկեան անկարող
դանուեցաւ վանկ մ'անգամ արտաբերելու, մինչդեռ կրօ-
նաւորն զինքը կը դիտէր անբացատրելի գթասրտու-
թեամբ։ Յետոյ ոտք ելլելով գոչեց վերջապէս.

— Հայր իմ, ես իմ բախտս քու ձեռքդ կը յանձնեմ.
ինչ որ կ'ուզես ինծի համար՝ այնպէս ըրէ։

— Ա՛ռ այժմ, որդեակ իմ, պատասխանեց Հայրն Օա-
լանդինի, յանձնենք մենք զմեզ Աստուծոյ կամաց, ինքն
ըստ իւր հաճոյից կը կարգադրէ, բայց եթէ կարող լինիմ
քեզի նպաստաւոր գործ մը կատարել մարդկային արդա-
րութեան առջև, ապահով եղիր որ զանց չեմ ըներ։ Բայց
այսօր զքեզ փնտռող խնդրակներէն ազատ մնալու հա-
մար՝ դիւրաւ վանքին մէջ կեցիր. գուցէ Աստուած բարի
խորհուրդ մ'ազդէ մեզի... Կարծեմ որ ազեղնաւորք մեկ-
նած հեռացած լինին։

— Հազար շնորհակալութիւն, Հայր իմ... պատաս-
խանեց եռանդագին՝ հաշտեալ ապաշխարողն, իւր սըր-
տայուզութեան պատճառաւ չկարենալով ուրիշ բան ա-
ւելցընել։

Հայրն Օալանդինի այն առեն դուրս ելաւ սենեկէն և
իւր ձեռաց մէջ առաւ կոմսին ձեռքը, որ սեղմեց զայն
անճառելի երախտագիտութեան զգացմամբ։ Ուղղուե-
ցան դէպ 'ի քովընդի եղած դուռն մի՝ որ կը հանէր վան-
քին նեղնասրահներէն միոյն մէջ։ Զդուշութեամբ առաջ
դնացին հին կամարակապ սրահի մը միջէն, որ վանքին
դերեզմանատան չորս կողմը շրջապատուած բակ կը ձե-
ւացընէր։ Լուսինն իւր սպիտակ ճառագայթները տխուր
կերպով կը շողէր կանչութենէ մերկացած ծառերուն
վրայ, և աշնանային հողմէն տարուբերուած չորցած տե-

բևներու մէջ գտնուած ամէն մէկ դերեզմանին դեռ աւելի աղդու և մելամաղձոտ երևոյթ կու տար։ Այնտեղ ամէն բան մահ կ'ազդէր, ուր այնքան դարերէ վեր ամփոփուեր էին մահագոյժ նշխարք վանքին քնակիչներուն։ Այս տեսարանին՝ կրօնաւորին և վայելելու կոմսին վրայ ըրած ազդեցութիւնն՝ իրենց մտածութեանց համաձայն էին։ Իրենք տխրաղդած և քարեպաշտ ակնարկ մի ձգեցին այն տեսարանին վրայ. կոմսն իւր հայեացքը դարձուց յետոյ յարգելի առաջնորդին վրայ, բայց Հայրն Օռլանդինի իւր վեղարը երեսին քաշեր ծածկեր էր։

Այն տեսն որ սրահին անկիւնը դարձան, մի և նոյն բոպէին դուռն մի բացուեցաւ։ Սաստիկ և պայծառ լոյս մի՝ բազմաթիւ ջահերէ արձակուած՝ լուսաւորեց մէկէն կրօնաւորը և իւր ուղեկիցը։ Վերջինս հիշ մի հանեց, որուն արձագանգ տուին Ալբայի դքսին աղեղնաւորներն, վասն զի զիրենք համբոյր դնելու համար էր՝ որ դուռը բացուեր էր։ Անոնք ճանչցան փախստականը. ձեռքերնէն փախչիլն անհնարին էր, ուստի կոմսն անշարժ կեցած սպասեց որ իրենք մօտենան։ Կրօնքն՝ որոյ օգնութեան դիմած էր՝ իւր սրտին արիութիւն տուեր էր, այն սրտին՝ որ մինչև այն պահուն սաստիկ կերպով երկիւղի ենթակայ էր եղած։

— Յանուն նորին վեհափառութեան՝ փիլիպոս Բ. կայսեր, ըսաւ սպայն մօտենալով, կոմս Վիլհէմ Վլադեսլու՝ դուք իմ կալանաւորս էք. հաճեցէք սուրերնիդ ինձ յանձնելու։

— Հաւասիկ, պատասխանեց կոմսն տխուր ձայնով՝ բայց հանդարտօրէն, յանձնելով իւր սուրը սպային. ես ձեր կալանաւորն եմ, սպասա Վլադստայնի. թող Աստուծոյ կամքն կատարուի։

— Ամէն. աւելցուց Հայրն Օռլանդինի ծանր ձայնով։ Յետոյ դառնալով դէպ 'ի կոմսն՝ ձեր պայծառութիւնն,

հարցուց սրտի յուզմամբ, դոր զուր տեղ կը ջանար խեղդել, ձեր պայծառութիւնն ինձ ուրիշ ըսելիք բան չունի։

— Դուք մարդկանց մէջ ամենաղնիւն էք, Հայր իմ, պատասխանեց կոմսն՝ սեղմելով նորա ձեռքը. ձեր քաղցրութիւնն զիս յուսահատութենէ փրկեց. դարձեալ ձեր վրայ կը վստահանամ. եթէ կարելի է ձեզ օգնութիւն մ'ընել աղջիկանս՝ առէք զինքը ձեր սուրբ հովանաւորութեան ներքև։ Հայր իմ, Հայր իմ, միայն զատակիս պատճառաւ է՝ որ դեռ երկիւղ կը կրեմ. օհ, հակեցէք նորա վրայ, խոստացէք որ զինքը պիտի տեսնէք և պիտի մխիթարէք։

— Այո. որդեակ իմ, կը խոստանամ, և քու բացակայ դտնուած ատենդ՝ իրեն վրայ պիտի հսկեմ՝ ինչպէս դու ինքն։

— Ո՛հ, Աստուած իմ, շնորհակալ եմ քեզ, դուշեց կոմսն. այժմ պիտի չվախեմ այնքան բանտէ և դլխապարտութենէ, եթէ հարկ լինի այդ կերպով մեռնիլը։ Առպետ, կու դամ ձեզ հետ, ուրեցուց դէպ 'ի պաշտօնական դառնալով։

— Ե՛րթ խաղաղութեամբ, որդեակ իմ, ըսաւ Հայրն Օռլանդինի. ես նաև զքեզ ալ ձեռքէ պիտի չթողում։

Կոմսն ուզեց դարձեալ շնորհակալ լինել յարգելի կրօնաւորին, վերջին ակնարկ մ'ալ ձգել այն պատկառելի անձին վրայ՝ որ զինքը փրկութեան ճամբուն մէջ դրեր էր՝ յուսոյ մէջ հաստատելով. բայց նա անհրաժեշտ էր դերեզմանատան կամարակապներուն հետ։ Սպայն պատուով վարուեցաւ կալանաւորին հետ։ Թէպէտ խոր գիշեր էր և ժամանակէ դուրս, սակայն նոյն ժամուն որոշեց մեկնիլ դէպ 'ի Բրիւքսէլ։ Պատգարակի մէջ մտցուց կոմսը և ամենայն կարևոր զգուշութեամբք զայն դոցելով՝ հրաժեշտ տուաւ վանքին Աստուածորդին, և ձիաւորուելով իւր մարդկանց հետ՝ արագ արագ իջաւ Մոն-Բլանդէնի բարձրութիւնը, ուղղուելով դէպ 'ի Բրիւքսէլի ճանապարհը։

ԳԼՈՒԽ Դ.

ԿՍԿԻՆ ԵՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ

Բրիւքսէլ քաղաքին մէջ արդէն տարածուեր էր վլա-դեալու կոմսին փախուստն. ամենամեծ եղեր էր բոլոր ազնուական իշխանաց զարմանքն, որոց ատիճանին և պատիւներուն երկար ատեն մասնակցեր էր կոմսն, լսելով այժմ թէ ինչպիսի եղերամբ ամբաստանուած էր։ Այսու հանդերձ կը դժուարէին հաւատք ընծայել ամբաստանութեանց, և կը կարծէին ընդհանրապէս՝ այնպիսի խառնակութեանց դարու մէջ և Այբայի դքսին խիստ վարչութեան ներքև, որ քաղաքական դաւադրութիւն մի ծածկուած պէտք է լինի՝ ապանութեան մ'անուան ներքև։

Վլադեալու պալատին մէջ ամեն դէն հանդարտութիւն և խոր լռութիւն տիրած էր. բնաւ հրադի յոյս չէր երևեր այն չքեղ բնակարանին պատուհաններէն. կարելի էր ըսել՝ թէ տիրոջը մեկնելէն վերջը՝ ամեն բան այնտեղ մեռած էր։ Ցառաջք ատորին յարկի սենեկի մը մէջ ժողովուած՝ կրակարանին չորս բոլորը՝ զարմացմամբ իրարու երես կը նայէին, իրարու կը հաղորդէին տխրութեամբ ինչ որ Վիլհէմ կոմսի մասին չորս կողմն տարածուած լուրէն լսեր էին, և միանդամայն կ'ուզէին խելք հասցընել թէ արդեօք ինչ եղած էր կոմսին փախստեան առոյգ պատճառն։ Նորա մեկնելուն երկրորդ օրն էր։ Լսած էին ծառայք որ կոմսը բռներ էին Կանդի Ս. Պետրոս վանքին մէջ և քերեր

էին Բրիւքսէլ. այս խորհրդաւոր և սարսափելի արկածին վրայօք ուրիշ տեղեկութիւն չունէին։ Ամենքը կը ցաւէին իրենց թշուառ տիրոջ վրայ, և չկրնալով հասկնալ թէ նա յանցաւոր կրնար լինել, կ'ողբային թէ նորա և թէ իրենց օրիորդ տիրուհւոյն Աւրսիսիայի, Վիլհէմ կոմսին միակ դստեր դժբախտ վիճակին վրայ։

Աւրսիսիայի հրեշտակային առաքինութիւններն, բարեպաշտութիւն, քաղցրութիւն և սիրելի բնաւորութիւնն՝ զինքը շատ ժամանակէ 'ի վեր ծառայից համար սիրոյ առարկայ մի դարձուցեր էին, իսկ զինքը ճանաչողաց համար՝ յարգանաց նիւթ։ Ամենքը տեսեր էին նորա արտակէզ ցաւը, չարչարանքներն և վշտերը՝ երբ լսեց իւր հօր փախուստն ու կալանաւորումը։ Ամենքը կը փափաքէին այս տխուր վշտաց դառնութիւնը մեղմել և զինքն սփոփել. բայց ինչ մարդկային մխիթարութիւն կարելի էր դնել այսպիսի ամենամեծ դժբախտութեան մը դիմաց։ Աւրսիսիա՝ առաքինի նաժշտի մը դաստիարակութեամբ մեծցած, առ որ իւր մայրն յանձներ էր մեռնելէն առաջ աղջկան կրթութեան հոգը, Աւրսիսիա՝ միայն կրօնից մէջ կրցաւ գտնել այն մխիթարութիւնները՝ զորս ուրիշ տեղէ չէր կարող քաղել, և իւր եռանդուն բարեպաշտութիւնն զօրացոյց զինքը՝ համակամութեամբ կրելու այնպիսի զարհուրելի դժբախտութիւն մը, որուն ենթակայ եղած էր։

Ըստ սովորութեան՝ հանդիսաւոր տօնուեցաւ ամեն տեղ Ամենայն Սրբոց յիշատակն։ Աւրսիսիա՝ շրջապատեալ իւր ծառաներով՝ սուրբ պաշտամանց ներկայ էր գտնուեր Ս. Գիւդիւլի եկեղեցւոյն մէջ, և որտի նոր զօրութիւն էր ստացեր քարոզչին ճարտասան խօսքերէն, որ սրտաշարժ կերպով նկարագրեր էր երկնից մէջ սրբոց ունեցած երջանկութիւնը, զոր ստացեր էին

յետ այս կենաց մէջ պատերազմելու և չարչարուելու։ Իւր բնակարանը դառնալով Աստուածային առանձնացեր էր իւր սեղական մատրան մէջ, ուր միայնակ Աստուծոյ և իւր վշտաց հետ միացած՝ սիրտը բոլորովին յանձներ էր այն Աստուծոյն՝ որ մրրիկները կը դիրեցնէ և զայրացած ալիքները կը խաղաղեցնէ։

Այսպէս անցաւ այն օրը Վլադեսլաւ ազատանին մէջ։ Թէ օրիորդ կոմուհւոյն չքեղ սենեկաց և թէ ծառայից սառին յարկի սենեկաց մէջ հաւասարապէս տիրած էր լռութիւն և ցաւ։ Երեկոյեան ժամը վեցին մահազդոյժ ներդաշնակութիւն մի լսուեցաւ. ամբողջ քաղաքին եկեղեցեաց և վանքերու զանգակներն օդոյն մէջ տարածեցին ըստ սովորութեան՝ Մեռելոց օրհնեա՝ տխուր նախատօնակը։ Այս տխրազդած և ծանր երաժշտութիւնն միանալով Վլադեսլաւ կոմսին ծառայից առաջուց ունեցած մելամաղձոտութեան հետ՝ դիրենք աւելի ևս տխրութեան ենթարկեց. ամէն մէկն անոնցմէ կը մտածէր սարսափով թէ գուցէ քանի մը շաբթէ և կամ քանի մ՚օրէ վերջը՝ այսպէս եկեղեցեաց զանգակները պիտի հնչեցնէին, ազդելով իրենց բարձրաշուք և հզօր տիրոջ Վիլհէմ Վլադեսլաւ կոմսին թաղման հանդէսը։ Այս տեսակ չարագուշակ մտածմանց մէջ ընկղմած՝ ամենեին լռութիւնը չէին ընդհատեր, մանաւանդ թէ իրարու հետ ալ փսփսալու հաղիւ կը համարձակէին. այնքան դիւրաւ հաղորդականութիւն ունին վախի զգացումներն։ Ցանկարծ գիսաւոր դրան մուրճը հնչեցուցին նախագահին մէջ։ Տիրոջը բացակայութեան ատեն, և այն ալ այնպիսի ժամու մէջ՝ երբ մէկու մի դալստեան յոյս չկար, այդ անսովոր աղաղակն տեսակ մի սարսափ ձգեց ծառայից մէջ, այն տեսակ անդիմադրելի սարսափներէն մին՝ որուն պատճառը մարդս չիմանար։ Ոչ ոք տեղէն չարժեցաւ. ամենքն իրարու երես կը նայէին,

և չեղաւ մէկն՝ որ համարձակէր նախադասութիւն երթալու։ Երկրորդ հարուած մ՚ալ առաջինէն աւելի զօրաւոր թնդաց, և քիչ վերջը երրորդ մ՚ալ։ Այն ատեն տան տէրուշին, որ ծերունի մէկն էր, և կոմսին ու նորա եղբօր Փիլիպպոսի մանկութիւնը տեսեր էր, ոտք ելաւ և ըսաւ ծառայից. « Թէ որ ձեզմէ ոչ ոք քաջութիւն ունի երթալու դուռը բանալու, ես ինքս ուրեմն կ՚երթամ. իմ հասակիս վախնալու բան չկայ, և քանի մ՚ալ չեմ զարհուրիր, որովհետև իմ տէրերուս երկար ժամանակ ամենահաւատարիմ ծառայութիւն մատուցեր եմ »։ Այս խօսքերս ըսելով՝ չոհ մը ձեռքն առաւ և դուրս ելաւ դէպ՝ի դուռն երթալու չուռոյ՝ որչափ կը ներէր իւր ծերունի հասակն։ Միւս ծառայք անհամբեր կը սպասէին տեսչին վերադարձին։ Լսեցին որ նախադասութիւն ծանր դուռն իւր լիսեռներուն վրայ հռնչեց, որոյ յաջորդեց քանի մը մանրերկրորդ լռութիւն, որ ամենուն համար խորհրդաւոր բան մ՚եղաւ։ Յանկարծ ծերունի տեսչին ճիչ մի՝ գիրենք նոր սարսափով սառեցուց. քայց թէ արդեօք այդ ճիչն ուրախութեա՞ն հետևանք էր կամ թէ սարսափի՝ չէին կարող դուշակել։ Անհարեկած անշարժ կը դողային և լուռ կեցած կ՚ուղէին լսել տանը մէջ ամենամեղմ ձայն մ՚անգամ որ յայտնէր իրենց այն ճիչ արձակելուն պատճառը, և կամ մանաւանդ կը սպասէին տեսչին վերադարձին՝ որ բացայայտէր իրենց այդ գաղտնիքը։ Արդեօք ինչ բան տեսեր էր ծերունին, ով երեսեր էր իրեն և որո՞ւն ձեռքը հնչեցուցեր էր այն գիրենք սարսափեցնող դրան հարուածները. ինքը տեսուչն ո՞ւր մնացեր էր, ինչ հանդիպեր էր արդեօք իրեն մինչև։ Եկաւ ժամ անցեր էր դուրս ելնելէն վերջը։ Այս ամէն հարցերն իրարու կ՚ընէին ցած ձայնով և այնպիսի եղանակաւ՝ որ կը մատնէր իրենց նախապաշարմանէ յառաջ եկած սարսաղողն. « Գուցէ զոհ եղաւ, կ՚ըսէին,

իւր անխոհեմութեան, այնպէս միայնակ յանդգնելով դէմ երթալ...». բայց արդեօք ի՞նչ բանի դէմ. ահա այս կէտն էր՝ զոր չէին կարող գիտել, և չէին կարող ուրիշ կերպով բացատրել, բայց եթէ երեւակայական ցնորից դիմելով, զորս ըստ հաճոյս կարող էին ստեղծել իրենք իրենց համար, որովհետեւ Մեծելոց օրհնան նախատօնակի օրն էր։

Յանկարծ ծանր քալուածքի ձայն մի հնչեց նախագաւթին մէջ. հանկարծ որ այդ ձայնն իրենց կը մօտենար. դուռը բացուեցաւ. իրենց սարսափն կրկնապատիկ եղաւ... բայց ո՞վ լինէր եկողն. նոյն իսկ տեսուչն. սարսափն արդէլք եղած էր իրենց ճանչելու նորա քալուածքի ձայնը։ Ներս կը մտնէ տեսուչն. ամէն ոք եղածը կ'ուզէ կարդալ նորա դէմքին վրայ. վախի ազդեցութեան հետեւանք բան մը չէն նշմարեր, ընդհակառակն կարծես ծածկուած սրտի գոհութիւն մի կը տեսնուի, զոր նա թագցընել կը ջանար իւր սովորական անդրդուելի անայլայլութեան ներքեւ։ Երկու կամթիլք արտասուաց դեռ նորա աչաց բիբերուն վրայ կը շողշողան, և առանց իւր ուզելուն՝ իւր դիմաց վրայ յայտնի կ'երեւի յուզմանց արդասիք։ Եթէ ուշադրութեամբ զննուի՝ կը տեսնուի որ իւր դուրս ելնելէն վերջը կարգէ դուրս բան մի հանդիպած պիտի լինի։ Ամէն մէկն եղածը լսելու կը փափաքէին սաստիկ հետաքրքրութեամբ. բայց Յովսեփի դիմաց գծագրութիւնն իւր նախկին ծանր լրջութիւնն առացաւ, և քաջածանօթ լինելով նորա խոհականութեան՝ իւրաքանչիւր ոք կանխաւ լաւ համոզուած էր, առանց բնաւ հարցմունք մ'ընելու, որ անկարելի էր նորա բերնէն խօսք որսալ։

Բայց Յովսէփ ինքն սկսաւ խօսիլ. իւր կերպն աւելի ևս լուրջ երեւցեր մի սաացաւ. ձեռքով նշան ըրաւ լռութիւն պահելու... բնաւ այդքան մեծ հեղինակութիւն

ունեցած չէր նա Վլադեսլու կոմսին ծառայից առջև։ «Բարեկամք իմ, բաւ վերջապէս ծերն՝ ծանր ձայնով, ձեզմէ շատերն երկար տարիներէ վեր Վիլհէմ կոմսին աղնուական տան ծառայութեան մէջ կը գտնուին. դուք ամենքդ դիտէք, թէ ինչպիսի եղեռնագործութեամբ ամբաստանուած է մեր տէրն։ Այս վայրկենիս նորա դատավարութեան խնդիրը քննութեան ենթարկուած է, և քիչ ժամանակէ վերջ, մանաւանդ թէ լսածիս համեմատ վաղը՝ Նորին պայծառութիւնն Աւբայի դուքսն զինքը հանել պիտի տայ դատաստանի առջև, որպէս զի իւր դէմ եղած ամբաստանութեանց պատասխան տայ։ Թող լինի կամ արդար և կամ յանցաւոր, բայց երբեք Վիլհէմ կոմսն մեր բարերարը լինելէ չի դադարիր. մենք ամենքս ալ լաւ գիտենք, թէ ինչպիսի քաղցրութեամբ և բարեգթութեամբ վարուած է նա մեր հետ՝ քանի որ նորա ծառայութեան մէջ կը գտնուինք։ Ուրեմն երախտագիտութիւնն ու հաւատարմութիւնն մեր վրայ պարտք կը դնեն իրեն համար ձեռքերնէս եկածն ընելու։ Եւ որովհետև այս սխալ պարագային մէջ առ Աստուած աղօթելէ զատ ուրիշ բան չենք կարող ընել, ուրեմն դիմենք ամենքս միասին՝ խնդրելով յերկնից՝ որ նա դատաստանէն ազատ արձակուի, և տայ Աստուած դարձեալ մեզի մեր տէրը, և մեզմէ մեր օրհնեալ տիրուհւոյն՝ Աւբայիսի կոմսուհւոյն յաւը, որ մեր վրայ այնքան զութ ունի և միշտ բարեսիրտ և առատաձեռն եղած է»։ Այս խօսքերս՝ որք կարդէ դուրս յուզմամբ սրտի արտասանուեցան այսպիսի հանդիսաւոր պարագայի մէջ, ամեն աչքերու արտասուաց պատճառ դարձան. և մի և նոյն վայրկենին ամեն ծառաներն՝ տեսչին չորս կողմը քոլորած՝ ծունր դրին. Յովսէփ սկսաւ Սրբոց և Գթութեանց Մօրը լիտանիան՝ Վլադեսլու կոմսին դիտման համար. ամեն մէկն եռանդեամբ և դղրդեալ ձայնով

պատասխանեցին, մոռնալով այն յիմարական զարհուրանքը՝ որով պաշարուած էին երեկոյեան սկիզբէն ի վեր։

Այս վայրկենիս արդեօք ինչ հանդիպեր էր օրիորդ կոմսուհւոյն առանձնարանին մէջ։ — Բաղմած էր նա փառաւորդ թիկնաթոռի մը վրայ, զոր երբեմն ասղնագործեր էր իւր մայրն. և նորա արտասուալից աչքերն երբեմն կը դառնային իւր աղօթարանին վերև վեռուած ոսկեայ խաչին վրայ և երբեմն սեւազգեաց կրօնաւորի մը վրայ, որ իրմէն քանի մը քայլ հեռու նըստեր էր, և էր այն անձն՝ որ տեսին առաջնորդութեամբ եկած էր այն տեղ, և զոր մեր ընթերցողք առանց դէժուարութեան պիտի ճանչին յանձին պատուական Հօրն Օռլանդինիի, որ իւր առ Վլադեսլու կոմսն առուած խոստման համաձայն՝ եկած էր մինթարելու զԱԼՅԻՍԻԱ։

— Ո՛հ, Հայր իմ, կ'ըսէր օրիորդն, Վլադեսլու կոմսն յանցաւոր չէ քնաւ այն եղերամբ՝ որով ամբաստանուած է. նա՝ որ այնքան քարի, այնքան ազնուասիրտ...

— Դուստր իմ, վրայ բերաւ կրօնաւորն, Աստուած միայն կարող է մարդկային սրտի գաղտնիքը ճանաչել. ինծի չի վերաբերիր որ և իցէ մէկը դատապարտելու իրաւունքն։ Ցոյս ունիմ որ դատաւորք մարդկային կրիք պիտի չվարուին։ Իսկ քեզի համար, որդեակ իմ, ամենաւին երկիւղ մի կրեր. Աստուած քեզի հետ պիտի լինի, և դուցէ քեզի համար հովանի լինի նաև հօրդ դլխոյն. դուն վստահութեամբ յանձնէ զքեզ նորա սուրբ ողորմութեան։ Թող լինի անմեղ և կամ յանցաւոր, բայց Վլադեսլու կոմսն միշտ քու հայրդ լինելէ պիտի չդադրի, և դու պէտք է միշտ զինքն յարգես և սիրես։ Իրաւ է, մարդկային արդարութիւնն շատ անդամ կոյր կը դառնուի, բայց ինչ որ ալ լինի՝ պէտք ենք հպատակիլ, ա-

ռանց ետ կենալու սիրելէ այն անձինքը՝ զորս նորա վը-
ճիռներն կը դատապարտեն։

— Ո՞ւչափ մխիթարութիւն կու տան ինձի քու խօս-
քերդ, Հայր իմ. ասց Աստուած որ իմ և քու սրտիդ
փափաքածին համեմատ՝ գործերը վերջանան. բայց ես
կը վախեմ այդ դատաստանէն. և թէպէտ չեմ կրնար
հաւատալ որ հայրս այդպիսի մեծ եղեռնագործութեամբ
յանցաւոր լինի, բայց կը վախեմ որ իւր թշնամիք, որք
կը դանուին Ալբայի դքսին խորհրդարանին մէջ, իրենց
ազդեցութիւնը պիտի բանեցրնեն։

— Ի՞նչ նպատակաւ կը կասկածիս որ փափաքին վը-
նաս տալ Վլադեսլաս կոմսին։

— Ի՞նչ նպատակաւ, Հայր իմ. այն նպատակաւ որ
ամենէն աւելի անարդագոյնն է, բայց այնու հանդերձ
ամենէն աւելի կը յուզէ մարդկային սրտերը. կ'ուզեմ
ըսել՝ նպատակաւ չահասիրութեան։ Մայրս քոյր մ'ու-
նէր, որ ամուսնացաւ Ակուավիվա կոմսին հետ. մօր
կողմանէ պապս՝ Բրէյնը—Լալլէնդ իշխանին մահուա-
նէն վերջը, նորա ստացուածոց բաժանման առթիւ խըն-
դիր ծագեցաւ հօրս և Ակուավիվա կոմսին մէջ, և ան-
համաձայն դանուելով խնդիրը դատաստանի ձգուեցաւ,
և հայրս դատը շահեցաւ. հետևաբար մօրքեռայրս այդ
ժամանակէն 'ի վեր մեզի դէմ անչիջանելի առելութիւն
պահած է։

— Այդ անձին առնի մէջ ունենալիք ազդեցութիւ-
նէն ուրեմն այդքան կը վախես։

— Այո՛, և այդ ազդեցութիւնն ինձ համար շատ ա-
ւելի անտանելի է, այնու՝ որ հօրս քայլակայութեան ժա-
մանակ Ակուավիվա կոմսն կը մնայ ամենէն մերձաւոր
ազգականս։

— Վստահ եղիր Աստուծոյ վրայ, դուստր իմ, իրեն
վրայ միայն պէտք է դնենք մեր յոյսը։ Երբ աշխարհս

բաց 'ի վտանգներէ և կորուստներէ ուրիշ բան չի տար մեզի, երկինք շատ անգամ կը պատրաստէ մեզի համար առատ և անակնկալ օրհնութիւններ։ Հիմա, որդեակ իմ, յանձնէ ինքզինքդ բոլորովին իւր սուրբ պաշտպանութեան, առանձնացիր սենեակդ, ձգէ զքեզ Սուրբ Մօրը գրկաց մէջ և պահապան հրեշտակիդ խնամոց ներքև. ես պիտի գամ դարձեալ զքեզ տեսնելու և տեղեկութիւններ բերելու հօրդ վրայէն։

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, դուչց օրիորդ կոմսուհին, ձգելով ինքզինքը կրօնաւորին ոտից առջև. Աստուած ինքն զքեզ ինծի դրկեց՝ ցաւոցս մէջ մխիթարելու համար։

Կրօնաւորն ուրիշ բան չըսաւ. վեր վերցուց օրիորդ կոմսուհին՝ յետ իւր օրհնութիւնը շնորհելու։ Կարգէ դուրս յուզմամբ բացաւ աղօթանոցին դուռը և դուրս ելաւ։ Ծերունի տեսուչն իրեն կը սպասէր սանդղոյն ոտքը, որ յարդելի զգացմամբ խոնարհելով՝ ողջունեց զինքը, և առանց բառ մ'անգամ արտաբերելու՝ մինչև փողոցին դուռն առաջնորդեց իրեն։



ԳԼՈՒԽ Դ.

ԿՈՄՍՆ ԱԿՈՒԱՎԻՎԱ

Յաջորդ օր առաւօտեան երբ դատաւորք կը հաւաքուէին Բրիւքսելի դատարանը, և յատեան կը կոչէին Վիլհէմ Վլադեալու կոմսը, նոյն ժամանակին՝ չքեղ դահաւորակ մի, չրջապատեալ պայծառազգեստ ուղեկից ծառաներէ և ձիաւորներէ, կանգ առաւ Վանդէր Օպլըստրէտէն պալատին դրան առջև։ Ուստի առաջին հարուածին՝ դուռն իր լիսառնց վրայ չրջուեցաւ՝ ցոյց տալով Վիլհէմի փառաչուք բնակարանին տխուր նախադասութիւնը։ Տեսուչն՝ որ քանի մը ծառայից հետ շտապով ներկայացեր էր աղնուական եկաւորներն ընդունելու, յարգութեամբ ծռեցաւ դահաւորակին առջև. բայց դէմքն այլագունած և տժգոյն էր. թերևս իւր սրտի անհանգստութեան պատճառաւ էր դիմաց գծագրութեան փոփոխմունքն, բայց կարծես ուրիշ պատճառ մ'ալ ունէր, որով իւր տարապին և մատանջութիւնն կ'աւելնար։ Ճանչցած էր նա Ակուավիվա կոմսին ծառայից տարազը, և այդ պարոնին ներկայ պարագայից մէջ երևնալն՝ չարագոյժ նոր ազիտից նշան մի կը թուէր իրեն։

Դահաւորակին դուռը բացուեցաւ, զարմացման մէջ դտնուած ծառայից առջև, և Ակուավիվա կոմսն վայր իջաւ։ Բարձրացաւ նա դրան առջևի աստիճանները, և հպարտ ձայնով հրամայեց տեսչին որ առաջնորդէ իրեն Աւրսխայի սենեակը։

— Տիրուհիս դեռ բնաւ տեղեկութիւն չունի, տէր իմ,

ձեր գալուստն մասին, յանդգնեցաւ ըսելու Ծերունի Յովսէփն. արդեօք կը ներէք ինձ որ դնամ իմաց տամ...

— Փեղի հրամայածս կատարէ, վրայ բերաւ սաստելով Ակուավիվա կոմսն. առջևս ընկիր և տար դիս Վլադեսլու կոմսուհւոյն մօտ։

— Տէր իմ, պատասխանեց Ծերունին՝ քաջալերուելով իւր տէրերուն վրայ ունեցած սիրոյ զօրութենէն, բարեհաճեցէք շնորհելու ինձ ժամանակ՝ միայն իմաց տալու ձեր գալուստը։

— Լաւ, մրմռաց կոմսն՝ սպառնալեաց ձև մ'ալաւելցնելով, մտածէ, յիշէ թէ որուն հետ կը խօսիս։

— Ակուավիվա կոմսին հետ կը խօսիմ, վրայ բերաւ Յովսէփ՝ ուղղաձիգ կանգնելով տեսակ մի հպարտութեամբ. և այս պատճառաւ Ձեր Մեծութիւնն պէտք է որ դիտնայ թէ իմ ազնուական և արժանայարգ տիրոջս Վլադեսլու կոմսին բացակայութեան ժամանակ՝ միայն ամենազնիւ և մեծարգոյ տիրուհիս Աւդիսիա կարող է հրամայել այս տանս մէջ։

Այսպիսի դիմադրութենէ և խօսքերէ աւելի զբրդռուելով Ակուավիվա կոմս՝ հրամայեց իւր ծառաներուն մէկդի ընելու Աւդիսիայի ծառաները, որք իւր առջևը իբրև պատնէշ կեցեր էին. և քանութեամբ մտաւ տան մէջ։ Այն տեղն Յովսէփ վախնալով զործոյն վատ հետևանքէն՝ առջևն ինկաւ, և որչափ կը ներէր իւր ծերութիւնն՝ շուտով օրիորդ կոմսուհւոյն սենեկաց կողմը դիմեց, և իմաց տուաւ իրեն կոմսին գալուստը և հանդիպած դէպքը։

Աւդիսիա առաջուց վախով կը գուշակէր դժբախտաբար այս այցելութիւնը։ Պատրաստուելու ժամանակ չունեցած՝ ծառայ մի սենեկին դուռը բացաւ և իմաց տուաւ Նորին Մեծութեան Ակուավիվա կոմսին գալը։ Աւդիսիա դինքը տեսնելով ոտք ելաւ. և սրտէն յանձ-

նարարական աղօթք մ'ընելով առ Աստուած, նստաւ հանդարտութեամբ, ձեռքով բազմոց մի ցոյց տալով կոմսին։ Կոմսն դեռ հանդարտած չէր այն սաստիկ յուզմանէն՝ զոր ունեցեր էր Յովսեփի քաջութեամբ դէմ դնելուն պատճառաւ, զոր ինքն իբրև նախատինք կը համարէր. ուստի հազիւ թէ իրեն ընծայուած աթոռին վրայ բազմեցաւ՝ գլխու նշանով ցոյց տալով ծեր տեսուչը՝ ըսաւ.

— Ես շատ զարմացեր եմ ձեր ծառայից լրբութեան վրայ, քենորդիդ իմ, և շատ դոհ կը լինիմ որ բարեհաճիք ազատել զմեզ ձեր տեսչին ներկայութենէն՝ յառաջ քան խօսք բանալու ինչ բանի համար որ եկած եմ այս տեղ։

— Եթէ ձեր ինձ հաղորդելիքն այնքան մտերմական է, պարոն կոմս, վայրկեան մի կրնամ հեռացընել այս հաւատարիմ ծառայն։ — Յետոյ դառնալով դէպ 'ի ծերունին՝ «Ազատ թող զմեզ, ուրեցուց օրիորդ կոմսուհին, ազատ թող զմեզ, բարի Յովսէփ. պարոն կոմսն ինձ հետ առանձին կ'ուզէ խօսիլ»։

— Այդ չէ ուզածս, օրիորդ, վրայ բերաւ կոմսն, տեսնելով որ Յովսէփ քայլ մ'առաւ դէպ 'ի դուռը՝ դուրս ելնելու համար. այս ծերուն լրբութիւնն այն աստիճանի հասած է՝ որ դուք այլ ևս չէք կարող վինքը ձեր տան մէջ պահել։

— Ի՞նչպէս, հարցուց օրիորդն ցաւալից զարմանքով. ես չեմ գիտեր ինչ նպատակաւ եկեր էք դուք հօրս բացակայութեան միջոց նորա տունը, այսպիսի տխրահիթ պարագաներու մէջ. բայց բնաւ յանձնառու չեմ կարող լինել Յովսէփը անէս հեռացընելու, և զրկուելու նորա մատուցած ծառայութիւններէն։

— Դուք չէք գիտեր, օրիորդ, թէ ինչ նպատակաւ եկած եմ ձեր մօտ, պատասխանեց Ակուավիվա արհա-

մարհական նեղսրտութեամբ. բայց դուք անշուշտ լաւ գիտէք որ ես ձեր մօրքեռայրն եմ և դուք իմ քենորդիս էք։ Հայրերնիս՝ այնպիսի եղբարն մի համար՝ որպ վրայ ձեզի խօսելն աւելորդ է, կը դանուի այնպիսի զարհուրելի կասկածանաց ենթարկուած, որ...

— Ի՞նչ կայ ուրեմն, պարոն, դոչեց Ալբիսիա դառնացաւով սրբելով արտասուաց քանի մի կաթիլներ։

— Այս կայ ուրեմն, քենորդիս իմ, որ ես եկած եմ ձեզ համար՝ առաջարկելու ձեզ իմ պալատս բնակութեան համար, մինչև որ դատաստանը վերջանայ. որովհետև ասկէց վերջը Վլադեսլու կոմսին տունն այլ ևս արժանաւոր բնակարան չէ կարող լինել իշխան Բրէյնը-Վալենդի թոռան։

— Ձեր մեծութիւնն կը մոռանայ, վրայ բերաւ ծանր կերպով օրիորդն, որ Վլադեսլու կոմսն եթէ անմեղ լինի և եթէ յանցաւոր, սակայն միշտ իմ հայրս է. և եթէ Աստուծոյ կամքն է որ նա իւր պատուոյ տիտղոսները կորսընցընէ, սակայն երբեք չէ կրնար կորսուիլ հօր կոչումն՝ զոր Երկինք իրեն շնորհած է։ Ուստի լաւ գիտցէք, պարոն կոմս, որ եթէ վայրկեան մի դադրի այս բնակարանս ինձի պատշաճ տուն լինելէ, միակ բնակարանն ուր կարող պիտի լինիմ ես առանձնանալ արժանապէս՝ պիտի լինի Վլադեսլու կոմսին քանան։

— Շատ սիրուն զգացման խօսքեր են այդ ամենն, քենորդիս իմ, պատասխանեց կոմսն՝ հպարտ և հեգնական կերպով. բայց Նորին Պայծառութեան Ալբայի դքսին կամք այս է՝ որ դուք իմ հսկողութեանս և խնամակալութեանս ներքև պիտի դտնուիք՝ մինչև որ Վլադեսլու կոմսին դատաստանն աւարտի. և ես եկած եմ խնդրելու ձեզնից՝ որ համակամիք այս կարգադրութեան։

— Քանի որ հայրս ողջ է՝ Ալբայի դուքսն երբեք իրաւունք չունի զիս անէս հեռացնելու. և այդ կարգադրու-

թիւնն զոր դուք բերեր էք ինծի, պարոն կոմս, ուրիշ բան չէ կարող լինել՝ բայց եթէ խաբէութեան մի հետեւանք։

— Խաբէութեա՞ն մի, օրիորդ, տաքցած կերպով կըրկնեց կոմսն. դէմ մի դնէք. ես զօրաւոր եմ. և եթէ դուք նոյն իսկ այսօր ինծի հետ դալու յանձնառու չլինիք՝ ձեր մերժելուն հետեւանքները պիտի կրէք։

— Առուած պիտի լինի, պարոն իմ պաշտպանս։ Գիտեմ ես ինչ է ձեր մտադրութիւնն. շատ ժամանակէ վեր կը փափաքէիք իմ ժառանգութիւնս և ընտանեացս ճոխութիւնները ձեռք բերել, և այժմ օգուտ քաղել կ'ուզէք իմ և հօրս թշուառութենէն. բայց դուք ալ լաւ գիտցէք որ հարկ եղած առեն պիտի կարենամ ես ալ դանդատներս հասցընել արքունի դահոյից առջև, և Արքայական վեհափառութեան առջև ամբաստանել ձեր շահասիրութիւնն և հալածանքները։

Կոմսն այս խօսքերս լսեց բորբոքեալ քարկութեամբ, որք այնքան ճշդրիտ իւր առջև կը դնէին իւր դաղտնի մտածութիւններն և բնաւորութիւնը. բայց ջանաց ինքզինքը զսպել, և իւր կատաղութեան կիրքը ծաղրածութեան քողով ծածկելով, ըսաւ.

— Ո՜հ, շատ բարձրէն կը թռչիք, քեռորդիս իմ, և կարծէք թէ ինաւ քանի տեղ չէք դներ այն ազդականութիւնը՝ որ զմեզ կը կապէ։ Կարծես թէ կը վախէք որ իմ տանս մէջ լաւ պատիւ պիտի չդտնէք։ Խնամակալի և մերձաւորադոյն ազդականի իրաւունքներովս (անդերձ՝ կրնամ զձեզ ապահովել նաև որ մենք պիտի վարուինք ձեր հետ այն ամենայն ակնածութեամբ՝ որ պատշաճ են ձեր տասիճանին և ձեր ազդականութեան. մենք դիտենք, օրիորդ, թէ մեր և թէ ձեր ոմ լինելն. հետեւաբար դիտենք նաև թէ ինչ է ձեր առ մեզ և մեր առ ձեզ ունենալիք պարտականութիւնն։

— Ուրեմն այնքան աղնուախոհ եղէք դէպ առ իս՝ որ զիս աղատ թողուք հայրենի տանս մէջ, և թէ ձեր աղ-ղեցութիւնն Աբբայի դքսին առջև ի գործ դրէք՝ որ հա-ւանի զիս այստեղ թողուլ. և եթէ հարկ է՝ ես ինքս ձեզ-ներց կը խնդրեմ և կը պաղատիմ որ այս շնորհքն ինձ ը-նէք։

— Ի՞նչպէս կարող եմ, վրայ բերաւ Ակուավիվա հեգ-նաբար, ինչպէս կարենամ շնորհել ձեզ այն ինչ՝ որ զիս պիտի զրկէ այսքան ինծի սիրելի քենորդւոյ մինարկայու-թենէն։

— Անգութ դաղան մ'էք, պարոն, գոչեց Աբբայիսխա՝ արտասուաց հեղեղ վաղցընելով. բայց դիտցէք որ ձեր անիրաւ պահանջանաց և ոչ մին յանձնառու պիտի լինիմ կատարելու. քանութիւնը միայն կարող պիտի լինի տի-պել զիս թողլու տունս և ծառաներս։

— Ի՞նչպէս որ կը հաճիք, քենորդիդ իմ։

Այս խօսքերս խրոխտ ձայնով զուրցելով ոտք ելաւ կոմսն, և ձայն տուաւ իւր ծառայից, որք նախասենեակը կը դանուէին. պատուէր տուաւ իրենց օգնելու օրիորդ կոմսուհւոյն՝ որ սենեկէն դուրս եկնէ։ Աբբայիսխա զարհուրանաց ճիչ մ'արձակեց։ Իւր ծառաներէն քաղամթիւք իւր չորս կողմը պատեցին՝ մէկդի վանելով կոմսին սպա-սաւորները և զինքը պաշտպանելու դիւք քանեցին։ Բայց օրիորդն՝ նկատելով նոցա սակաւութիւնն և դեռատի հասակնին, վախցաւ զիրենք անհաւասար և բոլորովին անյաջող կռուի մը վտանգի մէջ դնել, ուստի « թողէք զիս, սիրելի բարեկամներս, ըսաւ, Աստուած թոյլ պիտի չտայ՝ որ ամբարշտութիւնն յաղթանակէ »։ Այս խօս-քերս ըսելով պատուիրեց նոցա որ հեռանան, և մեծաքա-ջայոյ մուչտակ վերնազգեստ մի բերել տալով փութա-թեց ինքզինքը և պատրաստուեցաւ կոմսին հետ իջնելու. « Աստուած վկայ է, ըսաւ, որ միայն քանութեան տեղի

կու տամ»։ Կոմսն արհամարհանքի ժպտեցաւ, և իւր թեւը ներկայացուց օրիորդին՝ սանդուղն իջնելու համար. քայց նա մերժեց։ Դուռը բաց էր ատենմանաց վրայ, որոց առջև կը սպասէր դահաւորակն Ակուավիվայի և նորա քենորդւոյն։ Այն վայրկենին որ Ալսիսիա կառքին մէջ պիտի մտնէր, տխուր կերպով ձեռքը դէպ իւր ծառաները շարժելով իբրև ի նշան հրաժեշտի, (որք լալով հետևեր էին իրենց օրիորդ տիրուհւոյն), և ահա յանկարծ բարձրահասակ կրօնաւոր մի, երեսը քողովին ծածկած լայն վերարկու մը ներքև, ներկայացաւ ատենմանաց առջև, և էր նոյն ինքն Հայրն Օռլանդինի։ Օրիորդ կոմսուհին չուտով զինքը ճանչցաւ. իսկ տեսուչն ուրախութեան հիչ մ'արձակեց։

— Ո՞ւր կ'երթաս, դուստր իմ, հարցուց կրօնաւորն։

— Տեսէք, Հայր ի՛ր, որ ես զոհ կը գնամ անիրաւ հրամանի մը, որ խորամանկութեամբ ստացուեր է Ալբայի դքսէն. որով կը պարտաւորուիմ թողլու տունս և հետևելու պարոն Ակուավիվա կոմսին, որուն յանձնուած է ինձ վրայ հսկելու։

— Կեցիր, որդեակ իմ, և մտիր դարձեալ տունդ. քեզ հարկ չէ պստեղից աւելի հեռու գնալ. այս պարոնս վրդ ամենևին իրաւունք չունի։

Ալսիսիա զարմանաց ակնարկ մի ձգեց կրօնաւորին վրայ, որ կը յայտնէր իւր ունեցած յոյսը։ Ակուավիվա վայրկեան մի չփոթուած նորա տիրաբար արտասանուած խօսքերէն, քայլ մ'առաւ դէպ յառաջ և իշխանական կերպով խնդրեց օրիորդ կոմսուհիէն՝ որ դահաւորակը մտնէ։

— Պիտի չմտնէ, պատասխանեց Հայրն Օռլանդինի, իւր տան մէջ պիտի մնայ։

— Ո՞վ էք դուք ուրեմն՝ որ ընդդէմ կը կենաք Նորին Պայծառութեան Ալբայի դքսին հրամանաց։

— Զեղի՞նչ, Ակուավիվա կոմս. իմ այստեղ դալս ուրիշ բանի համար չէ, բայց եթէ արդելք լինելու ձեր անիրաւ պահանջանաց։

— Անիրաւ պահանջանաց. խմացէք ուրեմն որ ես իբրև մօրքեռայր և իբրև խնամակալ իրաւունք ունիմ այս օրիորդին վրայ՝ սորա հօր քանտարկուելեան ժամանակ։

— Իրաւո՞ւնք. ոչինչ են. նորա հայրն դատապարտուած չէ։

— Պիտի լինի...

— Պիտի լինի՝ դուք կ'ըսէք. և դուք չատ յանդուգն էք, պարոն կոմս, և միանգամայն չատ անգութ։ Մտի՞ր էք դուք ուրեմն Ամենակալին դաղտնեաց խորը, որ կը համարձակիք այդպէս վճռելու. բայց այսու հանդերձ, համարելով նաև որ նա դատապարտուի, սակայն երբէք նորա դուստրն ձեր խնամակալութեան պիտի չենթարկուի։

— Ո՞վ ըսաւ ձեզ։

— Ինքն... իւր հայրն...

— Ուրեմն ո՞ւրան պիտի յանձնուի։

— Ինձ...

— Ձեզ... բայց դուք ուրեմն ո՞վ էք։

— Կ'ուզէ՞ք տեսնել, կոմս Ակուավիվա. մօտեցէք ուրեմն այս տեղ և նայեցէք...

Կոմսն քնական քերմամբ երկու երեք քայլ դէպ ի կրօնաւորը գնաց, որ միայն իրեն տեսանելի լինելու չափ՝ քաչաւ իւր վեղարաւորեալ դէմքը։ Ակուավիվա հազիւ թէ նշմարեց՝ ետ վախաւ՝ սաստիկ ճիչ մ'արձակելով. և աւանց քաւ մ'արտաքերելու՝ ձգեցինքզինքը դահաւորակին մէջ, և նշան տուաւ իւր խմբին ետ դառնալու։

Ոչ Աբբիսիա և ոչ նորա տան մէջ դանուողներն տեսած չէին Հօրն Օռլանդինիի դէմքը. ամէնքն իրարու երես կը նայէին զարմացած. իսկ օրիորդ կոմսուհին չէր գիտեր

ինչ կերպով իւր երախտագիտութիւնն յայտնէր այն անձնաւորութեան որ այսպիսի անակնկալ կերպով ազատեց զինքն ամենամերձ վտանգէ։

Վայրկեան մ'ալ պէտք չէր փախցընել Վիլհէմ կոմսն ազատելու համար այն կորբտաներէն՝ որուն ինքն արժանի եղած էր և զոր իւր թշնամիք կը փութացընէին։ Հայրն Օռլանդինի մտածեց շուտով դատարանը գնալ, և յայտնեց Աղբիսիա կոմսուհւոյն որ իրեն ընկերակից լինի։

Շուտով հասան այն պալատին դրան առջև՝ ուր ահաւոր արդարութիւնն կը բաղմի։ Անհուն բազմութիւն պատած էր պալատին չորս դին և կարծես անթափանցելի պատուար մ'էր ժեացուցեր։ Կրօնաւորն ուրիշ հընարք չքանեցուց, բայց միայն Վիլհելմ կոմսուհւոյն անունը տալու, որով իւրաքանչիւր ոք յարգանօք մէկդի քաշուեցաւ նորա թշուառութեան առջև։ Նորա առաքինութիւններն և անսպառելի զիմաստութիւնն արդէն առակ դարձած էր ժողովրդեան բերանը, որ նորա անցնելու ժամանակ միաբերան օրհնէնք կարդացին իրեն, և կը խնդրէին Աստուծմէ որ հեռացընէ այն սուրը՝ որ նոյն վայրկենին նորա հոր գլխոյն վրայ կախուած էր։ Նոյնպիսի յարգանաց ցոյց տուուեցաւ իրեն նաև նախագահին և այն ամէն սրահներու մէջ, զորս պէտք է կորէր՝ մինչև դատաստանին սենեակը հասնելու համար։

Այս սենեկին մէջ ուրիշ զարդ չկար՝ բայց միայն մեծ խաչ մի, որ կախուած էր սեւ չուխաներու վրայ, որք դատաւորներուն բազմոցներէն սկսեալ՝ մինչև առաստաղը կը բարձրանային։ Վիլհելմ կոմսն՝ դատաւորաց առջև կանգնած՝ իւր վէճը լսելու կը պատրաստուէր։ Տժգոյն էր նորա դէմքն, բայց անայլայլակ պնդութիւն սրտի կը յայտնէր։ Այն վայրկենէն 'ի վեր՝ երբ կրծնից վեհ մխիթարութիւններն ընդուներ էր,

որ և իցէ վատասրտութեան զգացումն իրմէն հեռացեր էր, որով կը պատրաստէր ինքզինքը քաջութեամբ իւր մահուան վճիռը կրելու, իբրև արդար քաւութիւն իւր եղբայրասպանութեան։ Վերջին հարցափորձերուն մէջ խոստովանած էր իւր եղեռնագործութիւնը, յայտնելով թէ ինչպէս զրդռուած փառասիրութենէ և դժոխային խորհուրդներէ, ծանուցեր էր երկու աւազակաց իւր եղբօր նշանները՝ զինքն սպաննել տալու համար, և թէ յետոյ իւր խորհրդական խոստովանութիւնը կատարեր էր այդ գործոյ մասին առաջի Աստուծոյ, և թէ կը յուսար որ Աստուած և իւր եղբայրն՝ վերէն իրեն թողութիւն շնորհեն մեռնելէն առաջ՝ ի նկատի ունենալով իւր զղջումը։ Այս բացայայտութիւնն սաստիկ կերպով յուզեր էր ամբողջ դատարանը, և դատաւորք յետ երկար վիճաբանելու՝ բերեր ներկայացուցեր էին նախագահին իրենց վճիռը. երբ յանկարծ դռնապահ պաշտօնեայն բարձրաձայն աղաղակեց. «Ճամբայ տուէք պերճաշուք և բարձրապատիւ օրիորդին՝ Ալեյիսիա Վլադեսլու կոմսուհւոյն», Վիլհէմ և Ալուսավիա կոմսն (որ ներկայ էր դատարանին մէջ), մի և նոյն ժամանակին աղաղակ մ՚արձակեցին։ Առաջինն դեռ ժամանակ չէր ունեցած ձեռքերով երեսը ծածկելու՝ լսելով դատեր անունը, երբ սա արդէն իւր հօր բազկաց մէջ ձգեր էր ինքզինքը ուռուցելով արտասուօք, զարմանք և սրտայուզումն պատճառելով բովանդակ ժողովականաց։

— Դո՛ւստր իմ, սիրեցեալ որդեակ իմ, ինչո՞ւ եկար այս տեղ, զուցէ ողբմամբ ձայնով կոմսն, չնայելով մեղմով աղաչել ինքզինքը Ալեյիսիայի գրկախառնութենէն. թող տուր, քու հայրդ այնքան եղեռնագործ է՝ որ արժանի չէ քու անմեղ գգուանքդ սպլ ևս ընդունելու։

— Ո՜հ, հայր իմ, եթէ ինչ որ քու վրայդը զուրցուած են՝ ճշմարիտ են, դուն անանց լիուլի պատիժը

քաշեր ես արդէն քու խղճմտանացդ զղջմամբ, և Աստուած քեզի ներուն պիտի շնորհէ, գոչեց օրիորդն՝ արտաքնիկ հեծեծանքի և համբուրելով հօրը ձեռքերը, իբրև թէ ուզէր իւր արցունքով լուալ ընկել այն ձեռաց արատաւորութիւնը. Աստուած պիտի ներէ քեզի, և իմ արտասուքս խառնուելով քու զղջմանդ հետ քեզի համար գթութիւն պիտի ընդունին.. :

— Որդեակ իմ, դուստր իմ, քաղցրիկդ իմ Աւրսեսիա, ես արժանի չեմ քեզի հայր լինելու :

— Ես ալ, հայր իմ, արժանի պիտի չլինիմ որդիդ լինելու՝ եթէ այս տեղ քեզի հետ միասին չարտասուեմ :

— Որդեակ իմ, կ'աղաչեմ, կը կրկնէր կոմսն աղեխարշ ձայնով, կ'աղաչեմ դնա հեռացիր. դուն հիմա այս տեղ չես կարող կենալ... չես գիտեր դուն...

— Ես ամեն բան գիտեմ, հայր իմ, ամեն բան գիտեմ. բայց եթէ դուն պիտի...

Զկարողացաւ զարհուրելի բառն արտաբերել. արտասուքի խղդեցին նորա ձայնը, և վառուած նոր յուզմամբ ցաւոց և սիրոյ՝ գրկեց իւր դժբախտ հայրը. և յետոյ դառնալով դէպ 'ի դատաւորները՝ գոչեց. « Պարոններ, խօսեցէք, ասէք դեռ ինչ որ ասելիք ունիք... Եթէ թոյլ տաք ինձ՝ ես ամեն բան լսել կ'ուզեմ... և եթէ հայրս այնքան արութիւն ունի իւր սոսկալի վճիռը ասելու, նորա դուստրն ալ նուազ քաջարի պիտի չլինի... ես ինքս նորա մօտ պիտի կանգնիմ, աւելցուց՝ վերջին ատիճան սրբատյուզմամբ, և եթէ հարկ է որ նա մեռնի, ով ինծմէ աւելի կրնայ օգնել իրեն վերջին վայրկենին... ով ինծմէ աւելի կարող է լաւագոյն կերպով նորա հետ մեռնիլ... » :

Այս արտաշարժ տեսարանն ու խօսքերն՝ ամբողջ ժողովը տակնուվրայ բրած էին. այն ահաւոր սրահին մէջ՝ իւրաքանչիւր ոք արտասուք կը թափէր. և նոյն իսկ այն անձինք՝ որք քիչ առաջ գոհութեամբ հաւանութիւն կու

տային Վ.լադեսլու կոմսին դատապարտութեան վճռոյն, միայն հեծկլտանօք և լացով կը յայտնէին իրենց ցաւը՝ նորա և իւր անմման դատեր դառն վիճակին վրայ։ Դատաւորներն ալ զգածուած էին, և չէին կարող իրենք զիրենք զսպել հեծեծելու կանխապէս այն վճռոյն համար, զոր բռնադատեալ էին յարդարութենէ հրատարակելու։ Նախագահն կարգէ դուրս յուզուած՝ նշան մ'ըրած էր ձեռքով՝ որով իւր զիջողութիւնը կը յայտնէր օրիորդ կոմսուհւոյն որդիական փափաքանացը, և պատուէր տուած էր պաշտօնէի մը՝ աթոռ բերելու, որպէս զի Ա-լեքսիա կարենայ իւր հօրը քով նստիլ, մինչդեռ հայրն ըստ օրինաց դատարանին պէտք էր որ կանգնած մնար։ Բայց երբ աթոռը մատուցին՝ մերժեց նա, զուրցելով՝ որ իւր հօր համար լինելիք դատապարտութեան վճիռն՝ նաև իւր անձին համար էր, որովհետև հօրմէն զատ չունէր ինքն ուրիշ երջանկութեան առարկայ այս աշխարհիս վրայ, և թէ կը փափաքէր որ ինքն ալ նոյնպէս յոսընկայս լսէ արուելիք վճիռը։

Այն ատեն նախագահն ոտք ելաւ՝ հանդիսաւոր լռութեան մէջ, և գլուխը քանալով՝ անբացատրելի սրբատայուզմամբ և դողդոջուն ձայնով՝ ամբաստանութեան համառօտութիւնն ըրաւ, և մէջ բերելով նոյն իսկ Վ.լադեսլու կոմսին խոստովանութիւնը, հրատարակեց այն վճիռը՝ որով կը դատապարտուէր նա զրկուելու նախ իւր պատուոյ տիտղոսներէն և ազնուականութեան աստիճանէն, և յետոյ մատնուելու դահճին ձեռքը, և Բրիւքսէլի հասարակաց հրապարակին վրայ գլխատուելու։ Հայրն և աղջիկն՝ երկուքն ալ կարծես հաւասար քաջասրտութեամբ լսեցին այս ահաւոր խօսքերը. բայց նախագահին վերջին բառը արտաբերելու ատեն՝ Ալեքսիա խմացաւ որ թանձր և մութ վարագոյր մի իւր աչաց լոյսը կը ծածկէր... մարեցաւ ընկաւ իւր հօր գաղկաց մէջ։

Ակուավիվա կոմսն՝ որ առժամանակ մի երկիւղ կրեր էր օրիորդ կոմսուհւոյն ներկայութենէն՝ տեսնելով որ հօրը քով հասնելով՝ ամբողջ ժողովոյն կարեկցութիւնը դրաւեր էր, սրտին խորէն կ'ուրախանար իւր յաղթութեան վրայ, երբ յանկարծ Հայրն Օլանդինի, որուն ներկայութիւնը չէր տեսած, երևցաւ իւր աչքերուն, որ բազմութեան մէջէն դուրս ելաւ՝ դէպ 'ի դատաւորատեղը առաջ գնալով։ Մահն Ակուավիվայի աչքերուն այնքան զարհուրելի պիտի չլիներ՝ որքան այդ կրօնաւորին երևնալն եղաւ. ուստի դողդողալով կը սպասէր թէ ինչ վերջ պիտի ունենար արդեօք այս նոր պատահարն։ Ընդհակառակն վերադեալու կոմսն սրտի հաճութեամբ տեսաւ կրօնաւորին վրայ հասնիլը։ Եւ երբ օրիորդ կոմսուհին սկսաւ ուշաքերիլ, Հայրն Օլանդինի ծանր կերպով մօտեցաւ դատաւորաց բեմին, և յետ զիրենք ողջունելու՝ սկսաւ խօսիլ։

— Բաց 'ի դովեստից, տեարք իմ, (ըսաւ բարձր ձայնով՝ ամբոխին ուշադրութիւնն առ ինքն դրաւելու համար, որք հետաքրքրութեամբ լեցուած այս նոր միջադէպին վերջաւորութեան կը սպասէին, իբրև յաւելուածի մը այս տխուր տեսարանին). բաց 'ի դովեստից՝ ուրիշ բան չեմ կարող յայտնել ձեր 'ի զործ դրած խմաստուն կերպին վրայօք, որով քննեցիք և վճռեցիք վիճեմ վանդէր Օպսարէտեանի դատաստանը. բայց ուշադրութեան կարիւոր պարագայ մի կայ այս դատավարութեան մէջ՝ որ իմ պարտքս է ձեր առջև դնել, որովհետև ներկայ գլոնուող անձանց մէջ ինձ միայն ծանօթ է։ Եթէ դուք վերադեալու կոմսը դատապարտեցիք այն պատճառաւ որ իւր եղբօր կենաց դէմ եղեռնաւոր որոգայթներ լարած է, ձեր վճիռն չափէ դուրս խիստ եղեր է. իսկ եթէ կատարելապէս 'ի զործ դրուած և լրացած եղբայրասպանութեան համար է, դուք սխալման մէջ կը դտնուիք...

Կրօնաւորն վայրկեան մի ընդհատեց իւր խօսիլը՝ իբրև շունչ առնելու համար։ Ամենուն աչքերը նորա վերայ սեւեռած էին՝ կարդէ դուրս անհանգստութեան անձկանոք, և այնքան մեծ էր հասարակաց զարմանքն և հետաքրքրիր ակնկալութիւնն, որ ոչ դատաւորք և ոչ նոյն իսկ նախագահն չէին մտածեր կրօնաւորին խօսքն ընդհատել։ Յետ քանի մը վայրկեան ազդու միանգամայն ահաւոր լռութեան՝ սկսաւ նա իւր խօսքը շարունակել ծանր և ոլորոշ արտասանող ձայնով.

— Առանց դիտելու, տեսարք իմ, սխալման մէջ կը գտնուիք։ Դուք դատապարտած էք Վիլհէմ Վլադեսլու կոմսը՝ յենելով երկու աւաղակաց բացայայտութեան և նոյն իսկ իւր անձնական խոստովանութեան վրայ. բայց ամենքն ալ խաբուած են. Վիլհէմի եղբայրն դեռ կ'ապրի...

— Դեռ կ'ապրի... գոչեց ամբողջ ժողովատեղին մէկ բերնով. և արագ և խորին և զանազան հնչմանց դղրդիւնն արձագանգ տուաւ սրահին կամարակապին մէջ։

— Կ'ապրի, կրկնեց անբացատրելի զգացման ձայնով կոմսն Վլադեսլու. ո՞ւր է, ո՞ւր է. ինկնամ իւր ոտքերը, պաղատիմ իրմէ ներում...

— Եւ ի՞նչ ապացոյց. Հայր իմ. կարող էք տալ մեզի նորա ողջ լինելուն, վրայ բերաւ նախագահն՝ իւր խորին զարմանքէն արթընալով։

— Ապացոյցն ձեր աչաց առջև է, պատասխանեց կրօնաւորն, ազնուութեամբ վեր վերցնելով իւր վեղարը և դէպ 'ի թիկունքը ձգելով. ես եմ Փիլիպպոս Վլադեսլու։

— Ի՞նքն է, ի՞նքն է, Փիլիպպոսն է, գոչեցին ամեն շրթունք։

— Եղբայրս է, Փիլիպպոսն է, ի՞նքն է՝ զոր ես ըսպաննել ուզեցի, կ'ըսէր Վիլհէմ, ձգելով ինքզինքը իւր

եղբօր ոտից առջև։ — Բայց յարգելի կրօնաւորն զինքն իւր բազկացը մէջ վերցուցեր էր, և իրենց արտասուքն իրար կը խառնուէին։

— Եղբա՛յր իմ... Փիլիպպո՛ս... ամենամեծ է յանցանքս.., կը մրմնջէր հեծկլտանօք դատապարտեալն... Եղբա՛յր իմ. թո՛ղ որ ոտքերդ համբուրեմ. ես թշուառականս արժանի չեմ ապրելու և քու դդուանքդ ընդունելու...

— Վիլլէ՛մ, Վիլլէ՛մ. արդէն քեզի չեմ ըսած՝ որ ամէն բան ներուած է, ըսաւ կրօնաւորն։

— Իւր եղբայրն, իւր եղբայրն իրեն կը ներէ, կը դոչէր ամբոխն. Աստուած ալ կը ներէ իրեն. մարդկային արդարութիւնն ալ պէտք է ներէ։

Արդէն նախագահն անձամբ ճանաչելով կատարելապէս որ Մոն-Բլանդէնի կրօնաւորն էր նոյն ինքն Փիլիպպոս Վլադեալը, տեղեկագիր ուղարկած էր առ դուքսն Ալբայի, ծանուցանելով այս տարօրինակ դատավարութեան մէջ հանդիպած ամէն մի պարագաները։

Մինչդեռ երկու եղբարք փոխադարձ արտասուօք զիրար կ'ողողէին, Ալբիսիայի ուշքը բոլորովին տեղն եկած էր։ Գանի մը խօսք բաւական եղան բացատրելու իրեն և հասկցնելու հանդիպած իրողութիւնը։ Անընդհատ իւր հօր և հօրեղբօր գրկաց մէջ դդուուելով՝ այն ատեն միայն հասկցաւ թէ ինչ պատճառաւ այնքան խնամք և դութ ցուցեր էր թէ իրեն և թէ իւր հօրը վրայ այս քարի կրօնաւորն։

Միւս կողմէն ամբոխը լսելով որ տեղեկագիր ուղարկուած էր առ Կուսակալն, անհամբեր կը սպասէր պատասխանին. և պատասխանն հասնելու չուշացաւ։ Մէկէն ամենախորին լռութիւն տիրեց, և նախագահն ոտք ելլելով կարդաց բարձրաձայն հետևեալ պատասխանը.

« Յանուն Նորին Վեհափառութեան՝ կայսերն Փի-
» լիպպոս Երկրորդի, թագաւորին բովանդակ Սպանիոյ
» և Հնդկաց, Դքսին Բուրկոյնի, կոմսին Փլանդրիոյ,
» Դքսին Բրաբանտի և այլն, և այլն, և այլն, 'ի Հը-
» նորս Փիլիպպոս Վանդէր Օպսարէտէնի, կոմսին
» Վլադեսլու. Նորին Պայծառութիւնն՝ Սաորին-Նա-
» հանգաց Ընդհանուր Կուսակալն, թագաւորական ար-
» ատանագրով կը շնորհէ ներսումն Վիլհէմ Վանդէր Օպս-
» արէտէնի, այսու պայմանաւ սակայն՝ որ վաղը առա-
» ւօտեան՝ Սրբուհի-Գիւդիւլի-Ընկերութեան եկեղեց-
» ւոյն դրան առջև՝ հանդիսաւոր ներողութիւն պիտի
» խնդրէ իւր յանցանաց »:

Հազիւ թէ վճռոյն ընթերցումն աւարտեցաւ՝ ամբողջ սրահին մէջ հնչեց դղրդաձայն ծափահարութեանց շառաչիւնն՝ բազմաբարբառ աղաղակներու հետ, թէ կեցցէ Նորին Վեհափառութիւնն՝ Ո-ղորմութիւն. կեցցէ Նորին Պայծառութիւնն՝ Աւետ ի դուռս. կեցցէ Փիլիպպոս Վլադեսլու:

Համբաւը շուտով տարածուեցաւ 'ի Բրիւքսէլ: Եւ մինչդեռ Վանդէր Օպսարէտէն ընտանիքն կ'երթային իրենց շնորհակալութիւնը մատուցանելու Ալբայի դքսին՝ առ Վիլհէմ ցոյց տուած մարդասիրութեան համար, Ակուավիվա կոմսն տուն կը քաշուէր՝ սրտին մէջ կատաղի բարկութեամբ լի, դողալով միանդամայն որ չըլլայ թէ Փիլիպպոս և իւր քաջուրդն յայտնեն կուսակալին դատաւորութեան ժամանակ իւր բռնած չար ընթացքն իրենց դէմ:

Դքսին առջև ելնելով՝ Վիլհէմ նորա ոտքերն ինկաւ արտասուելով թափելով.

— Վեր կանգնէ, պարոն Վիլհէմ. ես քեզ շնորհեցի կեանքդ և ասոյճանդ զրկուիլդ՝ 'ի շնորհս եղբօրդ, ըսաւ խիստ ձայնով. բայց դուն զրկուած պիտի մնաս

քու սառցուածներդ և պատուանուններդ, որք իրա-
ւամբ անդրանիկ եղբօրդ կը վերաբերին։

— Եթանի՛ թէ, տէր իմ, գոչեց Վիլհէմ, երանի՛ թէ
ինաւ փառասիրութիւն ունեցած չլինէի զանոնք ունենա-
լու. շատ մը վշտերէ և խղճմտանց խայթերէ ազատ
մնացած կը լինէի։

— Իսկ ես, տէր իմ, իրեն կը թողում այն ամենը, ը-
սաւ Փիլիպպոս. ես քահանայ եմ և կրօնաւոր, և ինծի
բանի չեն դար երկրաւոր մեծութիւններն... բան մի
ուրցնեմ, եղբայր իմ, վրայ բերաւ՝ տեսնելով որ Վիլհէմ
ընդհատել կ'ուզէր իւր խօսքը. եթէ դուն չես ուզեր ը-
ունել զանոնք՝ թող ծառայեն իբրև օժիտ իմ եղբօրորդ-
ուդս՝ քու դստերդ Աւդիսիայի, որ այնքան բարեպաշտ
է և անմեղանուէր։

Ոչ ոք քան կրցաւ դուրցել այսպիսի կարգադրութեան
վրայ։ Աւդիսիա ընկաւ իւր հօրեղբօր բակաց մէջ՝ ուռ-
գելով արտասուօք։ Յարգելի կրօնաւորն խնդրեց Աւդիսի
դքսէն՝ որ ներէ իրենց դէպ 'ի հայրենական պալատին
դնալու, ուր իրենց իբրև յաղթանակի ընդունելութիւն
մ'եղաւ։

ԳԼՈՒԽ Զ.

ՅԻՇԱՏԱԿԲ ԱՆՑԵԼՈՅՆ ԵՒ ՎԵՐՋԱԲԱՆ

ՅԱՋՈՐԴ օրը մինչդեռ Վիլհէմ Ալբայի դքսին պալատը կանչուելով՝ կը կատարէր խոնարհութեամբ հանդիսաւոր ներումն խնդրելու տխուր արարողութիւնը, Փիլիպպոս պատմեց կուսակալին թէ ինչ կերպով ապատուած էր խալիֆայի մէջ մարդասպանաց հարուածներէն։ Մարդասպանք շատ մի դաշոյնի հարուածներով զինքը վիրաւորեր էին Պոմպիլիանի դղեկէն քիչ հեռու. բայց երբ մեռած կարծելով՝ հեռացեր էին՝ իրենց գործած եղերան վրայ խօսակցելով իրարու հետ, կրօնաւոր մի ջուրոյ վրայ հեծած՝ անցեր էր այն տեղէն։ Բարի Սամարացւոյն նման՝ իջնելով իւր գրաստէն մօտեցեր էր առ այն՝ զոր դիակ կը կարծէր, բայց դեռ ջերմութեան մնացորդ տեսնելով վրան քառնալով իւր գրաստին վրայ վանքը տարած էր։

“Վէրքերս խնամով դարմանուելով, շարունակեց Փիլիպպոս, շուտով ինքզինքս գտայ։ Քանի մը քառեր՝ զոր մարդասպաններէն լսեր էի, ինծի հասկցուցին իրենց եղեռնագործութեան պատճառը և ճանչցուցին այն անձն՝ որ զիրենք յորդորեր էր ի սպանութիւն։ Այս ծանօթութիւնս ինձ արհամարհել տուաւ այնպիսի աշխարհ մի ուր այնքան ամեն տեսակ նենգաւորութիւնք կը գտնուէին։ Որոշելով որ եղբօրս պատիժը յանձնեմ իւր խղճմտանաց խայթերուն, հաղուեցայ կրօնաւորի զգեստը, և վանքին մեծաւորէն խնդրեցի՝ որ արգելու

իւր կրօնաւորաց երբեք չխօսելու այս դիպուածիս վը-
բայ, որպէս զի առանձնակեցութիւնս չյայտնուի։

« Շատ տարիներ խաղաղութեամբ անցուցի այն միայ-
նարանին մէջ, և միայն սուրբ կարգերն ընդունելու
ժամանակս իմացուցի Սրբազան Փահանայապետին իմ
ով լինելս։ Կը փափաքէի հայրենիքս տեսնել և այնտեղ
ամենէն անծանօթ ապրիլ։ Ներին Սրբազնութիւնն յանձ-
նարարական թղթեր տուաւ ինձ՝ ուղղեալ առ Աբբայն
Սուրբ Պետրոս վանաց, որ Կանդի Մոն-Բլանդէնի
վրայ հիմնուած էր, և ես ընդունուեցայ այն վանքին
մէջ Հայր Աւդոստինոս Օսլանդինի անուան ներքև։

« Պատահած դէպքերը մտածելով ինքզինքս երջանիկ
կը համարիմ՝ որ կարող եղայ եղբայրս ազատել, և չը-
նորհակալ եմ Աստուծոյ որ պարգևեց դարձեալ եղբօրս
դստեր՝ իւր հօրը կեանքը, հօր մի՝ զոր այնքան զորը-
վանօք կը սիրէ։ Երկինք ամենամեծ երջանկութիւն
ընորհեց ինձ կարենալու ներել այն անձին՝ որ երբեմն
իմ կենացս դէմ որոգայթներ լարած է. թշուառ եղ-
բայրս արդէն բաւականէ աւելի պատիժ կրած է իւր
խղճի խայթերէն, և իւր զղջումն կը ջնջէ իւր եղեռ-
նագործութիւնը։ Ինքն ալ՝ ինչպէս երբեմն Դաւիթ
մարգարէն՝ ըսաւ առ Աստուած. Ջսիրտ բեկեալ և ըղ-
խոնարհ, Աստուած, մի արհամարհեր. և Աստուած իւր
աղօթից լսեց։ Նորա դուստրն զղջման գործը լրացուց.
վասն զի անմեղին թափած արտասուքն՝ աստուածային
գթութեան կշիռքին մէջ մեծ ծանրութիւն ունին »։

Աբբայի դուքս թէպէտ և անզգայուն և խստասիրտ
բնաւորութեամբ մէկն էր, սակայն շատ յուզուեցաւ
յարգելի կրօնաւորին պատմութենէն։ Կը աքանչանար
քրիստոնէական այնքան անձնանուիրութեան, այնքան
խորին խոնարհութեան, այնքան սերտ սիրոյ և մանա-
ւանդ այնքան անկեղծ, ճշմարիտ անյիշաչարութեան և

այնքան լիուլի ներողամտութեան վրայ, որք կրօնաւորին սրտէն կարծես դուրս կը զեղանէին։ Խորին մեծարանք ունեցաւ դէպ 'ի նա, և միայն նորա ունեցած արժանեաց համար կարծես մոռացաւ բոլորովին այն եղեռնագործութիւնը որ նեխի եղած էր Վիլհէմի դատին, և հետևաբար թոյլ տուաւ որ վերջինս շարունակէ կրելու իւր կոմս Վալդեսլու պատուանունը։

Ամենաքաղցր եղաւ երկու եղբարց համար ալ այն վայրկեանն երբ վերադարձան իրենց պալատը, ուր իրենց նախընթաց կենաց այնքան տարիները միասին անցուցեր էին։ Դարձեալ միացած լինելու ուրախութիւնեն ամեն անցեալ տխուր յիշատակները կը փարատէր։ Ամեն ծառաներն և մանաւանդ ծերունի տեսուչն՝ չէին գիտեր ինչ կերպով յայտնի ընէին իրենց սքանչացումն և սրտի հրճուանքը։ Ալբիսիա իւր յարգելի հօրեղբօր ծունկերուն փարելով՝ նորա ձեռքերը արտասուօք կը թրջէր. "Ատուած է՝ որ ամեն բան տնօրինեց, կը կրկնէր կրօնաւորն յուզեալ ձայնով, նորա դթութիւնն անսահման է. ինքն է՝ որ կը ներէ և կ'օրհնէ, ինքն է՝ որ կը միացընէ բաժանեալները և կը մխիթարէ։ Վիլհէմ, երջանիկ եմ ես... բայց ասկէց վերջը դեռ աւելի երջանիկ պիտի լինիմ քու երջանկութեանդ պատճառաւ..։ Վիլհէմ չէր կրնար այնպիսի բացատրութիւն մի դտնել՝ որ յայտներ իւր սրտին խորը յուզուած զգացումները. «Ա՛ռ ես իմս չեմ, բաւ վերջապէս, ամեն բան քեզի կը պարտիմ, խաղաղութիւն, պատիւս, կեանքս, փրկութիւնս. բոլոր իմ կեանքս այսուհետև քեզի նուիրուած պիտի լինի»։

Երեկոյին՝ երբ սրտերու կարգէ դուրս յուզմունքներն վոքր ինչ հանդարտեցան, Վիլհէմ խնդրեց եղբօրէն քանի մը մանրամասն ծանօթութիւն տալ այսպիսի սքանչելի դիպուածի մը պարագաներուն վրայ։ Շատ

դժուարութեամբ զիջաւ կրօնաւորն այս խնդրոյն՝ չուզելով զառն յիշատակները արթնցընելու. բայց չկարողացաւ դէմ դնել եղբօրը թախանձանաց, և պատմեց հաճաւօտ կերպով՝ ինչպէս բրած էր Ալբայի դքսին, թէ որպիսի օգնութեամբ ազատած էր Նախախնամութիւնն իւր կեանքը։ «Վանք մտնելէս վերջը, աւելցուց, մէկ հատիկ խնամքս եղաւ ծածկելու աշխարհէս այն սխալանքը՝ զոր 'ի գործ դրած էր վայրկենական մոլորութեամբ այն անձն՝ զոր երկրիս վրայ ամենէն աւելի կը սիրէի։ Մեծաւորն ինձ խոստացաւ անդրժելի գաղտնիք պահելու զայն, և տեղեկութիւն կու տար ինձի այն ամեն գործերու վրայօք՝ որք Հռովմայ մէջ եղած դէպքին հետ յարաբերութիւն ունէին։ Ատուած այս շնորհքն բրաւ ինձի, Վիլհէմ, որ քեզի դէմ բնաւ ամենևին և ոչ թեթև անդամ վրէժխնդրութեան զգացումն չունեցայ երբեք. և մանաւանդ թէ փութացած պիտի լինէի՝ առողջութիւնս հաստատուելէ անմիջապէս յետոյ՝ զալու ձգելու ինքզինքս քու բաղկացդ մէջ, եթէ վախ զգացած չլինէի իմ ներկայութեամբս քու կենացդ մեացած օրերը թունաւորելու։ Այժմ կրնամ ըսել քեզ, Վիլհէմ, աւելցուց կրօնաւորն սեղմելով իւր եղբօր ձեռքը, որ համարեցայ թէ աւելի օգտակար կրնամ լինել քեզի՝ իմ կեանքս, որ այնպիսի հրաշալի կերպով ազատուած էր, նուիրելով Սուրբ Սեղանոյն պաշտաման և սուրբ կըրթութեան ապաշխարութեան։ Վանքին յարգելի առաջնորդն կը խրախուսէր զիս առաջադրութեանցս մէջ, և կը բացայայտէր ինձ՝ որ երկրիս կարծեցեալ մեծութիւններն, որոցմէ հրաժարելովս իբրև թէ զոհ մի կատարած լինէի, ոչինչ են անանցանելի բարեաց առջև։ Երբոր սիրաս երկրաւոր մտածութիւններէ տարուբերուած՝ կը յուզուէր բաղձութեամբ անցելոյն և ներկային և ապագային, այն իմաստուն բժիշկն կը հանդարտեցընէր

շուտով կրած խռովութիւններս, և կ'ուսուցանէր ինձ հշմարիտ հաճոյք գտնելու այն նոր կենաց մէջ զոր ընդ-դրկեր էի։ Եւ յիրաւի, երբ քաղդատութեան կը ձը-դէի Նախախնամութեան ինծի պարգևած ապաստա-նարանին մէջ թագաւորած խաղաղութիւնն և հանդար-տութիւնը՝ աշխարհի խռովութեան և խառնակութեան հետ, երբոր չորս կողմս տեսնուած քարեսրտութիւնը, սէրը, անձնանուիրութիւնը կը զուգակշռէի այն վատ կրքերուն հետ՝ որք կը տանջեն մարդկանց շատերուն սիրտը, ինքզինքս երջանիկ կը համարէի՝ որ այնքան վշտերէ և դառն մտատանջութիւններէ ազատած էի։ Մտածութիւն մը միայն՝ որ տակաւ տակաւ գիս կը կե-ղնքէր, և որուն դէմ ամեն առաջադրութիւններս կը փշրուէին՝ հօրս յիշատակն էր, որ...»։

Այս վերջին խօսքերուս՝ Վիլհէմ ցաւագին աղաղակ մ'արձակեց, և դողդոջուն կերպով սեղմելով կրօնաւո-րին ձեռքը. «Ո՛հ, եղբայր իմ ըսաւ, եթէ գիտնայիր թէ օրշոգի անդամ քու յիշատակիդ հետ կը խառնուէր մեր ծնողին յիշատակը, որուն մահը ես ինքս երաշէ-ցի... եթէ գիտնայիր թէ այս մտածութիւնն ինչպիսի զարհուրելի խղճի խայթերու մատնած է սիրտս. ո՛հ...»։ Առատ արտասուք յաջորդեցին Վիլհէմի այս զգացմանց արտայայտութեան, որովք ողողուած էր նորա սիրտն։ Յարգելի կրօնաւորն երկար ատեն լուռ մնաց, որպէս զի ազատ ասպարէզ տայ այն արտասուաց և ողբոց՝ որք կը մխիթարէին իւր թշուառ եղբայրը։ «Լացեցէք, ըսաւ վերջապէս, լացեցէք, եղբայր իմ, կ'աղաչեմ պա-զատանաք. այդ մանրամասնութիւններն ինձ կարևոր են, կարօտ եմ ես անոնց իմ վրաս աղդած յուզմանցը... Ո՛հ, կը յիշեմ և երբէք մոքէս պիտի չելնեն հօրս մա-հուան ժամանակին առ իս ուղղած վերջին խօսքերը... Քու յիշատակդ միշտ իւր մտաց առջևն էր, անունդ

շրթանցը վրայ՝ մինչև վերջին շունչը առած առն։ Երբէք պիտի չմոռնամ այն հանդիսաւոր վայրկեանը՝ երբ յարգելի ծերունւոյն ուժաթափ ձեռքերն իմ վրաս հանդչեցան զիս օրհնելու համար. — Վիլհէմ, ըսաւ ինձ նուաղեալ ձայնով, դուն որդւոյս վերջինն ես և միակ մնացածն. Աստուած պահպան լինի քեզ, որդեակ իմ... եղբայր մ'ունէիր՝ որ օրինակ էր ամեն առաքինութեան. զարհուրելի ձախորդութիւն մի խլեց յափշտակեց զինքը մեր գրկէն. նորա մահն իմս ալ բաղեց. բայց այն սիրելի որդւոյս յիշատակն, այն վստահութիւնն թէ նա ինծի և քեզի համար կը բարեխօսէ առ Աստուած, որուն այնքան հաւատարմութեամբ ծառայեց, վերջին ժամուս քաղցրութիւնը կը պատճառեն... Մահուանս այս վայրկենին, Վիլհէմ, մէկ բան միայն կը յանձնարարեմ քեզի, որ անուանս և ստացուածոյս ժառանգ եղած առենդ՝ ջանաս ժառանգ լինել նաև անդրանիկ եղբօրդ առաքինութեանց...։ — Այս խօսքերս զորս յարգելի ծերունին այնպիսի հանդիսական պարագայի մէջ արտաբերեց՝ սիրտս կեղեքեցին։ Ցաւոր զրի՝ առանց բառ մ'ալ հնչել կարենալու. մահուան քրտինք թափեցաւ երեսէս. և երբ հայրենի աչն վերջին անգամ մ'ալ խաչին նշանը դրոշմեց գլխուս վրայ՝ ճակատս աւելի սառն էր քան թէ օրհասականին պաղած մատերը։ Այնքան անարժան կը համարէի ինքզինքս այն յետին օրհնութիւնն ընդունելու, որ շրթունքս բացուեցան զարհուրելի եղեռնագործութիւնս խոստովանելու. բայց Աստուած չթողուց՝ որ այնպիսի քաջմեղի դատաստանութեան մի յայտնութիւնն՝ մեր եղկելի հօր վերջին վայրկեանները թունաւորէր։ Հիմա վերահասու կը լինիմ որ քու ազնուասիրտ նեղողամտութիւնդ և յանձն առած դիւցազնական զոհդ եղած է պատճառ՝ որով ընդունեցայ հայրենի օրհնու-

թեան ամենամեծ շնորհքը. փոխանակ անիծից՝ որուն արժանի էի »։

Հօրս մահն, վրայ բերաւ բարի կրօնաւորն, քիչ յետոյ ծանօթ եղաւ ինձ այն տեղեկութիւններէն՝ զորս անուղղակի կերպով ձեռք կը բերէի այն ամէն բանի վրայօք՝ որք յարաբերութիւն ունէին մեր ընտանեաց հետ։ Այն օրէն 'ի վեր աւելի ևս բաժնուեցայ աշխարհէս, և շատ տարիներ անցուցի՝ միայն կենացս մէջ զործած յանցանացս քաւութիւն դանելու դբաղանաք, և եղբօրս վրայ երկնային շնորհքներն իջեցընելու մաղթանաք։ Յամանակիս մի մասն նուիրած էի ատաուածաբանական ուսմանց. մեծաւորներս պատշաճ դատեցան սուրբ կարգերն ինձ շնորհելու։ Իմ բերումս էր նուիրելու ինքզինքս տաբելութեան վիճակին, բայց այս փափաքանացս սատիկ կը հակառակէր այն զգացումն՝ որով կ'ըղձայի հայրենիքս տեսնելու։ Աւելի պատշաճ և օգտաւէտ դատեցին մեծաւորներս՝ որ այս վերջինը կատարեմ... և այս որոշողութեանս մէջ ալ դարձեալ կը սքանչանամ Աստուծոյ նախախնամութեան վրայ, որ չուզեց այնքան հեռաւոր ծովերու ասպարիզով իմ հեռանալս, որով պիտի չկարենայի անհրաժեշտ ներկայութեամբս աղատելու եղբայրս ամենադառն թշուառութիւններէ։ Ցաւոք մեկնեցայ Հռոմէն, վանքէս և խոնարհ կրօնաւորներէն, որք ինծի նկատել տուեր էին երկրիս վրայ երկնային խաղաղութեան հիանալի տեսարանը։ Հասայ հայրենի երկիրս՝ սրտի մեծամեծ յուզմամբ, ուր միտքս դրեր էի ապրիլ ու մեռնիլ՝ անծանօթ մնալով ամենուն և ամէն ատեն, Բրիւքսէլ եկած ատենս՝ հայրենի տունս երթս տեսնելու փափաքանացս ընդդիմացայ, բայց չուզեցի զրկել զիս այն անհաւելի հաճոյքէն՝ զոր զգացի Ս. Գիւղիւլի եկեղեցին երթալով աղօթելու, ուր մեր մանկութեան օրերուն՝ մեր ընտանեաց հետ միասին կ'երթայինք. Աստուա-

ծածկի սեղանին առջև ինկած, ծունր դնելով այն աղօթարաններուն վրայ՝ ուր շատ անգամ ծնրադիր աղօթեր էին բարեպաշտ մայրերնիս և յարդելի հայրերնիս, սիրտս Աստուծոյ առջև կը զեղուի։ Դու ինքդ, վիլէմ, դու ինքդ էիր մանաւանդ նիւթ իմ արտասուախառն աղաչանացս։ Այն արտասուքդ դառնութիւն չունէին քնաւ. առատ կը հոսէին և կ'ուռոդէին մատրան յատակը։ Աստուած անքացատրելի խաղաղութիւն մը կը թաղաւորեցնէր սրտիս մէջ։ Այսքան խռովայոյզ կենաց տանջանքներէ վերջը կը հեռատեսէի երջանիկ ապագայ մի. և առանց կարենալու նախատեսել այն պարագաները որ զմեզ պիտի միաւորէին դարձեալ, այն վայրկենէն զգացի որ յուսոյ քաղցր նշոյլ մի ծագեց սրտիս մէջ...։ Երկու ժամ այս դիրքիս մէջ մնացի, այնպիսի երջանկութիւն մի զգալով ոյզ զաղափարը չեմ կարող տալ։ Զուզելով երկար ժամանակ Բրիւքսէլ մնալ՝ գնացի շուտով Մոն-Բլանդէն. ուր աքսայն ընդունեցաւ զիս ամենամեծ սիրով։ Շատ անգամ զքեզ տեսնելու և դրկելու և սիրոյս հաւատքը ցուցընելու փափաքն սրտէս կ'անցնէր. բայց վախելով որ յայտնուիլս կասկածներ արթընցընելու պատճառ լինի, և մանաւանդ այս մտածելով որ նախախնամութիւնն ինքնին մեր միանալուն պարագաները պիտի մատակարարէր՝ իմ մակացուցումս դեռ շարունակելու հաստատամտութիւն կու տային։ Օր մի՝ նամակ մի դրեր էի քեզ՝ կարճ և սիրալիր, ուտելով որ կեանքս պահպանուած էր զքեզ սիրելու և քեզի նուիրուելու համար. դարձեալ քեզի անհանդստութիւն պատճառելու և սրտիդ խռովութիւնը շատցընելու վախն զիս ետ կեցուց. և ես ալ այն օրէն 'ի վեր անդադարելի որոշումն ըրի՝ վանքի լռութեան մէջ թաղելու ամեն իղձերս և փափաքներս, լիուլի վստահութեամբ յանձնելով զիս աստուածային նախախնամող կամաց։ Ամեն օր մատուցած սուրբ պա-

տարադիս դիտումը, կը նուիրէի քեզի համար. ժամանակն՝ որ ասատիկ վառվռուն երևակայութիւններն անդամ կ'անհետացընէ և ամենազօրաւոր սէրը կը տկարացընէ, օրէ օր աւելի ևս կը վառէր այն քարբոքուած փափաքն՝ որով քու երջանիկ լինելդ կը բաղձայի։ Իրաւ է որ աշխարհիս առջև դուն երջանիկ կ'երևնայիր։ Անսահման հարստութեան և բարձր պատիւներու ժառանգ, հատարակայ մեծարանքով շրջապատուած, հայր որդւոյ մի՝ որ օրինակ համարուած էր լուսի առաքինութեանց, անխոտով երջանկութեան վայելող կը կարծուէիր. բայց ես չէի կարող անդիտանալ թէ որչափ դառնութիւններով թունաւորուած էր քու կեանքդ անցեալին յիշատակաց։ Այս մտածութիւններով զբաղուած էր միտքս մանաւանդ մեր անկարծելի ծանօթութեան նախընթաց շաբթուան մէջ։ Արքոյ Կուսին բարեխօսութիւնը խնդրելով ինձ օրեայ յատուկ ջերմեռանդութիւն մի կատարած էի առ Աստուած։ Ամանց որոշ դաղտիար մ'ունենալու լինելիքին՝ վիճակիդ վրայօք անհանգիստ էր սիրտս. կարծես ձախող պատահարներու և դժբախտ կատարածի մը նախազգացումն կը կրէի։ Երբեք չէի կարող երևակայել անդամ՝ ինչ որ մեզի համար սահմաներ էր աստուածային նախախնամութիւնն, և այն զարմանալի պարագաները՝ որոնք պիտի միացըներ ինքն երկու մէկմէկէ բաժնուած սրտեր, որք գիրար սիրելու այնքան յարմարաւոր ստեղծուեր էին „։

Այս վերջին խօսքերս արտասանած ատեն, յարգելի կրօնաւորին աչքերէն քանի մը խոշոր կաթիլք արտասուաց թափեցան. և վիլլէմ ձգեց դարձեալ ինքզինքը նորա բազկաց մէջ և քանի մը վայրկեան նորա կուրծքին վրայ սեղմուած մնաց. " Ամէն բան քեզի պարտական եմ, բաւ իւր եղբօր, և եթէ ինձի համար պիտի ծագի երջանիկ օրերու ապագայ մի՝ այն ալ եղբայրական սիրոյդ և

եռանդուն աղօթքդ արդիւնք պիտի լինի։ Կենացս մնացած ժամանակը դուն պիտի լինիս իմ զօրավիգս և առաջնորդս, ինչպէս եղար ազատարարս. քեզի պարտական եմ կեանքս. քեզի պիտի պարտիմ նաև փրկութիւնս »։

Յաջորդ օրը Ս. Գիւդիւլի ընդարձակ եկեղեցին կանուխ լեցուած էր անհամար ժողովրդեան բազմութեամբ։ Հաւատոց այն եռանդուն դարուն մէջ՝ ամեն բանէ առաջ միշտ Աստուծոյ օգնութիւնն կը հայցուէր նեղութեանց ժամանակ, և գոհութիւն կը մատուցուէր բարեբախտ դիպվածի մէջ, որք կամ տէրութեան և կամ ընտանեաց ուրախութեան առիթ կը լինէին։ Հայրն Օղլանդինի հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէր՝ Աստուծոյ առինքն ցուցած երախտեաց շնորհակալ լինելու համար։ Կարդէ դուրս ամիսփուռն և ջերմեռանդութիւն տիրած էր ամբոխին վրայ. ամեն ոք սուրբ և վառ սրտայուզմամբ դրաւուած էր՝ տեսնելով սեղանին դիմաց ծունր դրած Վիլհէմ կոմսն և իւր Ալոյսիա դուստրն՝ ամենախորին խոկման մէջ ընկղմած։ Երբ յարգելի կրօնաւորն Փիլիպպոս Վլադեսլու կոմսն, որ քսան տարիներէ 'ի վեր մեռած կը համարուէր, երեւցաւ քահանայական պատարագի զգեստներով զարդարուած՝ ակամայ սարսուռ մի մեծարանաց և զարմանաց ամբողջ ամբոխին վրայ տիրեց։ Ամենուն աչքերն կը դառնային մերթ դիտելու սուրբ Սեղանոյն արժանաւոր պաշտօնեայն, որ այնքան երկար տարիներ դիւցազնական անձնանուիրութեամբ աշխարհէս ծածկուած մնացեր էր, և մերթ նորա եղբօր վրայ, որ թէպէտ և մեծ յանցաւոր էր՝ այլ նաև մեծ ապաշխարող եղած էր, և մերթ բարեպաշտութեան և առաքինութեանց այն հրեշտակին վրայ, որոյ անմեղութիւնն իւր ընտանեաց վրայ իջուցեր էր երկնից օրհնութիւնը։

Հաղորդութեան հանդիսաւոր վայրկենին Վիլհէմ և նորա դուստրն ամենամեծ ամփոփմամբ դէպ 'ի սեղանը մօտեցան, և կրօնաւորն բաշխեց իրենց երկնաւոր և աննապական Հացը՝ զԳառնն Աստուծոյ։ Այս վեհմ և սքանչելագեղ տեսարանս ամեն ներկայ եղողաց արտասուաց պատճառ եղաւ. ամենքը ծունր դրին եկեղեցւոյ սատիճանաց վրայ և դեռնամած՝ օրհնեցին զԱստուած բարութեան և սիրոյ, որոյ գթութիւնն բազմապատիկ եղած էր այն երբեմն ցրուեալ ընտանեաց վրայ։

Երբ սուրբ պատարագին մատուցմանէն վերջը Վլադեսլու կոմսերն իրենց պալատը դարձան, ամբաւ բաղմութիւն մարդկանց ընկերակից եղաւ իրենց մինչև բնակարանին դուռը։ Ամբոխին պատկառանաց լռութիւնն կ'ընդհատուէր միայն կեցցէներու աղաղակաւ 'ի պատիւ յարգելի կրօնաւորին, և սրբազան երգերու ներդաշնակութեամբ։

Հայրն Օլանդինի (այս անուամբ մենք զինքը կը ճանչնանք) քանի մ'օր միայն մնաց եղբօրը տունը. հակառակ ամենայն թախանձանաց Վիլհէմի՝ համոզեց նոս իր եղբայրը որ իր կրօնաւորական պարտքն կը բռնադատէր զինքը վերադառնալու 'ի վանս։ Մեկնելու առեն՝ Վիլհէմ ձգեց ինքզինքը նորա ոտից առջև, թախանձագին խնդրելով որ իր օրհնութիւնը չնորհէ և աղաչելով որ նորանոր չնորհք և լոյս խնդրէ իրեն համար Աստուծմէ. «Մատաղութիւն մ'ունիմ, ըսաւ բաժնուելու վայրկենին. Աստուած որ զայն ինձ ազդեց՝ ինքը միայն կարող է 'ի գործ դնելու միջոցներն ալ ինձ չնորհել»։

Քանի մ'ամիս վերջը Վիլհէմ կոմս՝ որ իր դստեր ամուսնութեան կատարուելուն կը սպասէր՝ որպէս զի ինքն ալ աշխարհիս հրաժեշտ տար, պսակել տուաւ զինքը Արէմբերգ ազնուական տոհմին իշխաններէն միայն հետ. յետոյ առանձնացաւ Մոն-Բլանդէնի վանքը՝ իր օրերը

լմընցընելու իրեն յարգելի եղբօր քով։ Սեռաւ նա եղբօրը մահուընէն քանի մը տարի վերջը երջանիկ և սրբաքակեաց ծերութեամբ, գրեթէ տասն և հինգ տարի բարեպաշտական գործոց և աղաչխարանաց մէջ իւր օրերն անցընելով, և ամեն օր իւր եղերան վրայ լալով, և խընդրելով նաև ՅԱստուծոյ այն թողութիւնը՝ զոր այնքան ազնուութեամբ ընդուներ էր իւր ամենալաւ և ամենասիրելի եղբօրէն։

663-668

2013